



Հելսինկյան Քաղաքացիական Ասամբլեայի Վանաձորի գրասենյակ

ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ
ԴԻՏՈՐԴԱԿԱՆ ԱՌԱՔԵԼՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ
ՀԱՆՁՆԱՐԱՐԱԿԱՆՆԵՐԻ ԱՐՏԱՑՈԼՈՒՄԸ
2016թ. ՀՀ ԸՆՏՐԱԿԱՆ ՕՐԵՆՍԳՐՔՈՒՄ

ԵՎ

*ԴՐԱՆՑ ԻՐԱԿԱՆԱՑՈՒՄԸ 2017Թ. ԱԶԳԱՅԻՆ
ԺՈՂՈՎԻ ԵՎ ԵՐԵՎԱՆԻ ԱՎԱԳԱՆՈՒ
ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԺԱՄԱՆԱԿ*



Հելսինկյան Քաղաքացիական Ասամբլեայի
Վանաձորի գրասենյակ

ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ
ԴԻՏՈՐԴԱԿԱՆ ԱՌԱՔԵԼՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ
ՀԱՆՁՆԱՐԱՐԱԿԱՆՆԵՐԻ ԱՐՏԱՑՈԼՈՒՄԸ
2016թ. ՀՀ ԸՆՏՐԱԿԱՆ ՕՐԵՆՍԳՐՔՈՒՄ

*ԵՎ ԴՐԱՆՑ ԻՐԱԿԱՆԱՑՈՒՄԸ 2017թ. ԱԶԳԱՅԻՆ
ԺՈՂՈՎԻ ԵՎ ԵՐԵՎԱՆԻ ԱՎԱԳԱՆՈՒ
ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԺԱՄԱՆԱԿ*

Խմբագիր՝ Արթուր Սաքունց
Յեղիսակներ՝ Վարդինե Գրիգորյան
Անուշ Համբարյան

Սույն զեկույցը ՅԵԼՍԻՆԿՅԱՆ Քաղաքացիական Ասամբլեայի Վանաձորի գրասենյակի նախկինում իրականացրած գնահատման վերանայված և համալրված տարբերակն է:

Չեկույցի պատրաստումը և հրապարակումը ֆինանսավորվել է Բաց Հասարակության հիմնադրամների կողմից:

Չեկույցում ներկայացված տեսակետները որևէ ձևով չեն արտահայտում ֆինանսավորող կազմակերպությունների պաշտոնական տեսակետները:

Բոլոր հեղինակային իրավունքները պաշտպանված են:

Բովանդակություն

Հապավումներ.....	6
Ներածություն	7
Ընտրությունների միջազգային դիտորդական առաքելությունների հանձնարարականները 2016թ. ՀՀ ընտրական օրենսգրքի վերաբերյալ	10
Ընտրությունների միջազգային դիտորդական առաքելությունների հանձնարարականների արտացոլումը 2016թ. Ընտրական օրենսգրքում և դրանց իրականացումը 2017թ. ապրիլի 2-ի Ազգային ժողովի և մայիսի 14-ի Երևանու ավագանու ընտրությունների ժամանակ	18
Եզրակացություն.....	55
Օգտագործված գրականության ցանկ	56
Հելսինկյան Քաղաքացիական Ասամբլեայի Վանաձորի գրասենյակի մասին.....	58

Հապավումներ

ԱԺ – Ազգային ժողով

ԵԱՀԿ – Եվրոպայի անվտանգության և համագործակցության կազմակերպություն

ԵԽԽՎ – Եվրոպայի խորհրդի խորհրդարանական վեհաժողով

ԿԸՀ – Կենտրոնական ընտրական հանձնաժողով

ԸՄԴԱ – Ընտրությունների միջազգային դիտորդական առաքելություն

ԸԸՀ – Ընտրատարածքային ընտրական հանձնաժողով

ԺՀՄԻԳ – Ժողովրդավարական հաստատությունների և մարդու իրավունքների գրասենյակ

ՀՀ – Հայաստանի Հանրապետություն

ՏԸՀ – Տեղամասային ընտրական հանձնաժողով

ՏԻՄ – Տեղական ինքնակառավարման մարմիններ

Ներածություն

Հայաստանի Հանրապետությունում նախագահական առաջին ընտրությունները տեղի են ունեցել 1991թ.-ի հոկտեմբերին՝ հաջորդելով 1991թ.-ի սեպտեմբերին կայացած Անկախության հանրաքվեին: Այդ պահից ի վեր Հայաստանում անցկացվել են մի շարք խորհրդարանական, նախագահական, տեղական ինքնակառավարման ընտրություններ և հանրաքվեներ:

Անցած 25 տարիների ընթացքում պարբերաբար փոփոխվել է Հայաստանի Հանրապետությունում ընտրական գործընթացները կարգավորող օրենսդրությունը: 2016թ. մայիսի 25-ին ՀՀ ազգային ժողովը երրորդ ընթերցմամբ և ամբողջությամբ ընդունեց ՀՀ ընտրական նոր՝ թվով երրորդ օրենսգիրքը, որի ընթացակարգերը բխում են 2015թ. դեկտեմբերի 6-ին հանրաքվեի արդյունքում ընդունված սահմանադրական փոփոխություններից: Ընտրական օրենսգրքի ընդունումից հետո շարունակվել են փոփոխությունների շուրջ բանակցությունները տեղական և միջազգային շահագրգիռ կողմերի միջև, որի արդյունքում 2016թ. հունիսի 30-ին ընդունվել է ՀՀ Ընտրական օրենսգրքի փոփոխությունների երկու փաթեթ, որոնցից մեկն ուժի մեջ է մտել 2016թ. հուլիսի 30-ին: ՀՀ ԿԸՀ-ի կողմից որպես մյուս փաթեթի ուժի մեջ չմտնելու պատճառ ներկայացվել է այն, որ որևէ կազմակերպություն չի համաձայնել նախատեսված ժամկետում տրամադրել անհրաժեշտ տեխնիկական աջակցություն, թեև, ի սկզբանե, այդ փաթեթի ուժի մեջ մտնելը կապվում էր ֆինանսական միջոցների հայթայթման հնարավորության հետ:

Իշխանության և ընդդիմության միջև բանակցությունների շարունակման արդյունքում 2016թ. հոկտեմբերի 20-ին ընդունվել և 2016թ. նոյեմբերի 14-ին ուժի մեջ է մտել ՀՀ Ընտրական օրենսգրքում փոփոխություններ կատարելու մասին նոր օրենք, որով նախատեսված հիմնական փոփոխությունը ընտրողների ստորագրած ցուցակների հրապարակումն էր:

Հարկ է նշել, որ Ընտրական օրենսգրքի շուրջ «4+4+4» ձևաչափով բանակցություններին ի սկզբանե մասնակցել են նաև քաղաքացիական հասարակության ներկայացուցիչները, սակայն համաձայնությունները ձեռք են բերվել և ստորագրվել են միայն իշխանության և ընդդիմության միջև, քանի որ քաղաքացիական հասարակության ներկայացուցիչները բանակցությունների արդյունքների վրա էական ազդեցություն ունենալու հնարավորություն չեն ունեցել:¹

Ընտրությունների միջազգային դիտորդական առաքելությունները (ԸՄԴԱ) կարևորագույն դեր են ունեցել ընտրական բարեփոխումների խթանման գործում, հատկապես ընտրական օրենսդրության վերանայման առումով: 2015 թ. Յեյթիևսկյան Քաղաքացիական Ասամբլեայի Վանաձորի գրասենյակն իրականացրել է ամբողջական վերլուծություն (Յեյթիևսկյան Քաղաքացիական Ասամբլեայի Վանաձորի գրասենյակ ՅԿ, 2015)՝ գնահատելով 2003-2013 թթ. Միջազգային դիտորդական առաքելությունների կողմից ներկայացված հանձնարարականների իրականացումը օրենսդրական և իրավակիրառ մակարդակներում:

2017թ. սկզբին, վերանայելով Յեյթիևսկյան Քաղաքացիական Ասամբլեայի Վանաձորի գրասենյակի վերոհիշյալ վերլուծությունը, գրասենյակի կողմից պատրաստվել է «Ընտրությունների միջազգային դիտորդական առաքելությունների հանձնարարականների արտացոլումը 2016թ. ՀՀ ընտրական օրենսգրքում» զեկույցը, որտեղ ներկայացված է 2003թ.-ից ի վեր ընտրությունների միջազգային դիտորդական առաքելությունների, մասնավորապես ԵԱՀԿ/ԺՅՄԻԳ-ի, ԵԽԽՎ-ի, «Ժողովրդավարություն՝ իրավունքի միջոցով» եվրոպական հանձնաժողովի (Վենետիկի հանձնաժողով) հանձնարարականներն ու դիտարկումները և դրանց արտացոլումը նոր Ընտրական օրենսգրքում:

Սույն զեկույցի նպատակն է գնահատել 2017թ. Ազգային ժողովի և Երևանու ավագանու ընտրությունների ժամանակ միջազգային

¹ Հայտարարություն ընտրական օրենսգրքի և դրա շուրջ վերջին զարգացումների վերաբերյալ, <http://transparency.am/hy/news/view/1600>

դիտորդական առաքելությունների հանձնարարականների կիրառումը և համալրել Եվրոպական միության և Եվրոպայի խորհրդի համատեղ ծրագրի միջոցներով պատրաստված «Ընտրությունների միջազգային դիտորդական առաքելությունների հանձնարարականների արտացոլումը 2016թ. ՀՀ ընտրական օրենսգրքում» զեկույցի համապատասխան բաժինը:

2016թ. ՀՀ ընտրական օրենսգրքի ընդունման գործընթացը և Ընտրությունների միջազգային դիտորդական առաքելությունների հանձնարարականները օրենսգրքի վերաբերյալ

Ընտրությունների միջազգային դիտորդական առաքելությունները հաճախ շեշտում են, որ պատշաճ օրենսդրական կարգավորումները, թեև կարևոր, բայց բավարար չեն եզրակացնելու համար, որ ընտրությունները լավ կկազմակերպվեն: Անհրաժեշտ է ընդգծել այն, որ արդար և ժողովրդավարական ընտրություններ անցկացնելու և ընտրական գործընթացների նկատմամբ հանրային վստահությունը բարձրացնելու հարցում ամենաեական գործոնը իշխանությունների վճռականությունն է:

Այնուամենայնիվ ընտրական կարգավորումները և դրանց մշակման փուլում հասարակության մասնակցության ապահովումը ընտրական բարեփոխումների վերաբերյալ քաղաքական կամքի առկայության կարևորագույն ցուցիչ են: Այս տեսանկյունից ՀՀ ընտրական օրենսգրքի վերաբերյալ Հայաստանի Հանրապետության քաղաքացիական հասարակության և Օրենսգրքի մշակման ընթացքին աջակցող Վենետիկի հանձնաժողովի կարծիքներն ու մտահոգությունները հիմնականում համընկնում էին:

2016թ. մայիսի 10-ին քաղաքացիական հասարակության մի շարք ներկայացուցիչներ տարածել են կարծիք ընտրական օրենսգրքի դրույթների միջազգային չափանիշներին համապատասխանության վերաբերյալ: (Հասարակական կազմակերպություններ, 2016)

Կարծիքում մասնավորապես նշվում է, որ ՀՀ ընտրական օրենսգիրքը սահմանված ժամկետում չի ներկայացվել ՀՀ Ազգային ժողով և չի հրապարակվել, իսկ պատասխանատու պետական մարմինները երկար ժամանակ հանրությունից գաղտնի են պահել դրա պատրաստ լինելու փաստը: Օրենսգիրքն առաջին անգամ հասանելի է դարձել 2016թ. փետրվարի 22-ին Վենետիկի հանձնաժողովի պաշտոնական կայքում՝ անգլերեն լեզվով, որից հետո

հայերեն տարբերակը հայտվել է ՀՀ Կառավարության կայքում՝ ՀՀ Կառավարության 2016թ. մարտի 3-ի նիստի օրակարգում ընդգրկվելու արդյունքում:² Օրենսգրքի մշակման ընթացքում չեն պահպանվել «Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքով ամրագրված կարգավորման ազդեցության գնահատմանը³, ՀՀ Կառավարության որոշմամբ սահմանված հանրային քննարկումների կազմակերպմանն ու անցկացմանը⁴ և ՀՀ նախագահի հրամանագրով նախատեսված կառավարության նիստին հարցեր ներկայացնելուն վերաբերող պահանջները:⁵ Մինչև ՀՀ Կառավարության կողմից օրենսգրքի նախագծին հավանության արժանացնելը, փաստաթղթի հեղինակները խուսափել են մասնակցել հասարակական կազմակերպությունների կողմից նախաձեռնված քննարկումներին: Օրենսգրքի հիմնական հարցերի շուրջ կոնսենսուս ձևավորելու նպատակով ընտրությունների ոլորտում փորձառություն ունեցող և ավելի քան 200 քաղաքացիական հասարակության կառույցների կողմից պատվիրակված ներկայացուցիչները մասնակցել են 4+4+4 (իշխանական կոալիցիա, ոչ իշխանական կուսակցություններ և հասարակական կազմակերպություններ) ձևաչափով քննարկումներին, որոնք նախաձեռնվել են քաղաքական ընդդիմության կողմից: Սակայն ՀՀ պետական մարմինների ներկայացուցիչների անզիջում դիրքորոշման պատճառով քննարկումները որևէ էական արդյունք չեն տվել: Չնայած ԵԱՀԿ/ԺՀՄԻԳ-ի համապատասխան հանձնարարականների պահանջներին, ընտրական օրենսդրության փոփոխությունները չեն իրականացվել ներառական կերպով, և շահագրգիռ բոլոր կողմերին

² ՀՀ Կառավարության 2016թ. մարտի 3-ի նիստի օրակարգ <https://www.e-gov.am/sessions/archive/2016/03/03/>

³ «Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենք, հոդված 27.1, մաս 2

⁴ ՀՀ Կառավարության 2010 թ. մարտի 25-ի «Հանրային քննարկումների կազմակերպման և իրականացման կարգը հաստատելու մասին» թիվ 296-Ն որոշում և ՀՀ Կառավարության 2012 թ. ապրիլի 5-ի «Իրավական ակտերի օրենսգրքերի մշակման մեթոդական ցուցումներին հավանություն տալու և Հայաստանի Հանրապետության կառավարության 2010 թվականի հոկտեմբերի 28-ի թիվ 42 արձանագրային որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին» թիվ 13 արձանագրային որոշում

⁵ ՀՀ նախագահի 2007թ. հուլիսի 18-ի «Հայաստանի Հանրապետության կառավարության և նրան ենթակա պետական կառավարման այլ մարմինների գործունեության կազմակերպման կարգը սահմանելու մասին» ՆՅ-174-Ն հրամանագիր

հնարավորությունն չի ընձեռվել ներդնել առավելագույն ջանքերը՝ ընտրական բարեփոխումների վերաբերյալ փոխհամաձայնության հասնելու նպատակով:

Քաղաքացիական հասարակության կողմից առանձնացված հիմնական խնդիրներն էին՝

- Հայաստանի Հանրապետությունից դուրս գտնվող անձանց քվեարկության հնարավորության խտրական ապահովումը,
- ընտրողների ռեգիստրի թարմացման հետ կապված խնդիրները և առկա անճշտություններն ու բացակա անձանց քվեների հնարավոր օգտագործումը,
- հավասար ընտրական իրավունքի ապահովման և բազմակի քվեարկության բացառման մեխանիզմների անարդյունավետությունը,
- վարչական ռեսուրսի չարաշահումը և անհավասար հնարավորությունները,
- առանձին խմբերի ընտրողների կարծիք ձևավորելու հնարավորության բացակայությունը՝ քարոզչական տեղեկատվության անհասանելիության պատճառով (օր.՝ զինծառայողներ, քրեակատարողական հիմնարկներում գտնվողներ),
- ընտրախախտումների կանխարգելման գործուն մեխանիզմների բացակայությունը,
- քվեարկության գաղտնիության պահպանման խնդիրները,
- դիտորդների և զանգվածային լրատվության միջոցների ներկայացուցիչների իրավունքների սահմանափակումը,
- ընտրախախտումների և քվեարկության արդյունքների արդյունավետ բողոքարկման մեխանիզմների ու հնարավորությունների բացակայությունը,

Քաղաքացիական հասարակության կարծիքի հրապարակման օրը հրապարակվել է նաև Վենետիկի հանձնաժողովի և ԵԱՀԿ/ԺՅՄԻԳ-ի Նախնական միացյալ կարծիքը ՀՀ ընտրական օրենսգրքի (2016թ. ապրիլի 18-ի դրությամբ) վերաբերյալ: (VENICE COMMISSION and OSCE/ODIHR, 2016) 2016թ. հուլիսի 19-ին հրապարակվել է Հանձնաժողովի Երկրորդ նախնական միացյալ կարծիքը՝ 2016թ.

մայիսի 25-ին ընդունված Ընտրական օրենսգրքի և 2016թ. հունիսի 30-ին ընդունված փոփոխությունների փաթեթի վերաբերյալ:

Վերահաստատելով Հայաստանի Հանրապետությունում ընտրական գործընթացների վերաբերյալ իրենց նախկին դիրքորոշումներն ու հանձնարարականները՝ 2016թ. մայիսի 10-ին հրապարակված Նախնական միացյալ կարծիքում Վենետիկի հանձնաժողովը և ԵԱՀԿ/ԺՅՄԻԳ-ը նշել են, որ ընտրական օրենսգրքի ընդունման ժամկետը չափազանց կարճ է: Թեև համապետական ընտրություններին ընդառաջ ընտրական օրենսդրության կայունությունը կարևոր է, սակայն կարևոր է նաև ժամանակ ունենալ ամբողջական, ներառական և հանրային քննարկումների համար՝ Էական փոփոխությունների վերաբերյալ փոխհամաձայնության և վստահության համար:

Միջազգային կառույցները նշել են, որ Օրենսգիրքը որոշակիորեն անդրադարձել էր Վենետիկի հանձնաժողովի և ԵԱՀԿ/ԺՅՄԻԳ-ի նախկին հանձնարարականներին, մասնավորապես ընտրողների նույնականացման համակարգի բարելավման, ԿԸՀ կարգավորիչ իրավասությունների հզորացման, կանանց թեկնածության քվոտաների բարձրացման, դիտորդների հավատարմագրումը կամայական վերացնելու հնարավորություն տվող դրույթների հեռացման և քարոզչության կանոնների համակարգման տեսանկյունից:

Այնուամենայնիվ, նրանք արձանագրել են ընտրացուցակների ճշգրտության հետ կապված մտահոգությունները, դիտորդների իրավունքների սահմանափակումները և նոր տեխնոլոգիաների կիրառման անհստակությունը: Ըստ Վենետիկի հանձնաժողովի և ԵԱՀԿ/ԺՅՄԻԳ-ի, օրենսգիրքը չէր անդրադառնում ընտրական վեճերի և բողոքարկումների լուծման արդյունավետ մեխանիզմների հետ կապված հանձնարարականներին, քարոզչության ֆինանսավորման թափանցիկությանը և հաշվետվողականությանը, վարչական ռեսուրսների չարաշահումների կանխման երաշխիքներին և լրատվամիջոցների դերին:

«Կայուն մեծամասնության» ապահովման կարգավորումները համարվել են չափազանց բարդ: Ընդհանուր առմամբ միջազգային կառույցները խորհուրդ են տվել.

- վերանայել կոալիցիաների կազմման նկատմամբ դրված անհարկի սահմանափակումները,
- արտերկրում գտնվող անձանց փոխարեն քվեարկության վերաբերյալ կասկածների փարատման նպատակով հնարավորություն ընձեռնել արդյունավետորեն ծանոթանալ քվեարկության մասնակիցների ցուցակին՝ առանց անձի գաղտնիության խախտման,
- ապահովել նոր տեխնոլոգիաների արդյունավետ և աստիճանական ներդրումը, ներառյալ ձեռքբերումը, փորձարկումը, համապատասխան անձանց վերապատրաստումը և հանրության իրազեկումը,
- վերացնել դիտորդների համար նախատեսված ստուգարքները և կանոնադրական խնդիրների նկատմամբ եռամյա պահանջը,
- ապահովել Կենտրոնական ընտրական հանձնաժողովի անկախությունը՝ սահմանելով, որ նախագահի կողմից ԿԸՅ-ի անդամների նշանակման դեպքում վերջինս խորհրդակցություններ անցկացնի Ազգային ժողովում ներկայացված կուսակցությունների հետ,
- վերանայել կանանց ներկայացվածության քվոտան՝ ապահովելով նրանց արդյունավետ բաշխումը ընտրական ցուցակում,
- պարզեցնել քվեարկության և ձայների ամփոփման գործընթացը և քվեարկության արդյունքների սահմանումը,
- ապահովել բոլոր շահագրգիռ կողմերի իմաստալից մասնակցությունը օրենսգրքի փոփոխությունների գործընթացում:

2016թ. հուլիսի 19-ին հրապարակված Երկրորդ նախնական միացյալ կարծիքում Վենետիկի հանձնաժողովը և ԵԱՀԿ/ԺՅՄԻԳ-ը, գնահատելով նախորդ փաստաթղթում ներկայացված հանձնարարականների կատարումը, նշել են, որ դրանց զգալի մասը

հաշվի է առնվել, մասնավորապես՝ ընտրությունների առաջին փուլից հետո քաղաքական կուլիցիաների ձևավորման համար տրամադրվող ժամկետը կրկնապատկվել է (3 օրվա փոխարեն նախատեսվել է 6 օր), երկրորդ փուլից առաջ դաշինքների կազմման ժամկետը երկարացվել է երեք օրով՝ դարձվելով 5 օր, սահմանվել է քվեարկություն կատարած ընտրողների ցուցակներին ծանոթանալու հնարավորություն, դիտորդների համար նախատեսված ստուգարքը հանվել է և կրճատվել է դիտորդական կազմակերպության կանոնադրական նպատակների հետ կապված պահանջի ժամկետը՝ սահմանելով 1 տարի, հանրապետության նախագահի կողմից ԿԸՅ-ի նախագահին և անդամներին նշանակելու դեպքում նախատեսվել է խորհրդարանական խմբակցությունների հետ խորհրդակցելու պահանջ, ընտրական վարչարարություն իրականացնող պաշտոնյաների անկախությունն ամրապնդվել է նրանց լիազորությունների վաղաժամկետ դադարեցման հիմքերի սպառնիչ ցանկի ներկայացմամբ, կուսակցությունների ցուցակներում կանանց ներկայացվածության համար 25-ի փոխարեն սահմանվել է 30 տոկոս քվոտա, իսկ համապետական ցուցակի համար 4-ի փոխարեն նախատեսվել է, որ յուրաքանչյուր 3 թեկնածուից մեկը պետք է իգական սեռի ներկայացուցիչ լինի, ԿԸՅ-ն պարտավորվել է հանձնաժողովների անդամների, մասնագետների, թեկնածուների, վստահված անձանց, դիտորդների, ընտրողների համար ուսուցողական նյութեր պատրաստել և հրապարակել, ընդունվել են կարևոր կարգավորումներ կապված քարոզարշավների, դրանց ֆինանսավորման, թեկնածուներին գրանցումից հանելու, դիմում-բողոքների գործընթացին: Միջազգային կառույցները նաև կարևոր են համարել 2016թ. աշնան ՏԻՄ ընտրությունների ժամանակ նոր տեխնոլոգիաների կիրառման փորձարկման հնարավորությունը, որը նախատեսվել էր Ընտրական օրենսգրքով, ընդգծելով նաև նոր դրույթները տեղեկատվության պաշտպանության վերաբերյալ օրենքներին և չափանիշներին համապատասխանեցնելու, սարքավորումների հանրային փորձարկման և սերտիֆիկացման, արտակարգ իրավիճակների պլանավորման, հանձնաժողովի

անդամների պատշաճ վերապատրաստման, ընտրողների և վստահված անձանց շրջանում իրազեկվածության բարձրացման անհրաժեշտությունը: Հարկ է նշել, որ 2016թ. ՏԻՄ ընտրությունների ժամանակ քվեարկության նոր կարգի փորձարկում տեղի չունեցավ, փոխարենը այն կազմակերպվեց 2017թ. փետրվարին ՏԻՄ ընտրությունների ժամանակ, ինչը փոփոխությունների կամ վերանայման համար բավարար ժամանակ չապահովեց մինչև ՀՀ Ազգային ժողովի ընտրությունները:

Վենետիկի հանձնաժողովը և ԵԱՀԿ/ԺՀՄԻԳ-ը նաև արձանագրել են, որ իրենց կողմից ներկայացված մի շարք, մասնավորապես, ներքոնշյալ հանձնարարականներ, հաշվի չեն առնվել կամ թերի են կատարվել.

- Հանել դիտորդական կազմակերպությունների կանոնադրական նպատակներում ժողովրդավարության և մարդու իրավունքների մասին դրույթ ներառելու պահանջը
- Վերանայել հետընտրական կռախիցիայում ներգրավվող քաղաքական ուժերի թվի սահմանափակումը,
- Վերանայել կուսակցությունների և դաշինքների համար նախատեսված ընտրական տարբեր շեմերը,
- Դիտարկել ազգային փոքրամասնությունների ներկայացուցիչներին թեկնածուների սովորական ցուցակում ներառելու հնարավորությունը՝ փոքրամասնությունների ձայների միջոցով խորհրդարանում քաղաքական ուժերի հարաբերակցությունը փոխելու հնարավորությունից խուսափելու համար,
- Թույլատրել քաղաքացիների խմբերի կողմից թեկնածուների առաջադրումը,
- Օրենսգրքի 45-րդ հոդվածում ներառել ԿՀՀ-ի փոխնախագահի, քարտուղարի և ՏՀՀ նախագահի, փոխնախագահի և քարտուղարի հեռացման հիմքերը,
- Վերանայել վաղաժամկետ ընտրությունների դեպքում թեկնածուների ցուցակների գրանցման համար փաստաթղթերի ներկայացման ժամկետները,

- Նախատեսել վարչական ռեսուրսների չարաշահման ընդհանուր արգելք,
- Դիտորդների և ՉԼՄ ներկայացուցիչների հավատարմագրման համար նախատեսել ողջամիտ ժամկետներ, ներառյալ նաև ընտրությունների երկրորդ փուլի համար,
- Աղյուսակավորման գործընթացի թափանցիկության մեծացման նպատակով ներառել լրացուցիչ միջոցներ,
- Երևանի, Գյումրիի և Վանաձորի ավագանիների ընտրությունների համար նվազեցնել ընտրվելու և ընտրական գրավը վերադարձնելու շեմը,
- Վերանայել Երևանի, Գյումրիի և Վանաձորի ավագանիների ընտրությունների ժամանակ հաղթողին լրացուցիչ տեղեր տալու հնարավորությունը:

Փաստաթղթում Վենետիկի հանձնաժողովը և ԵԱՀԿ/ԺՅՄԻԳ-ը նշել են, որ Ընտրական օրենսգիրքը ընդունվել է նշանակալից մեծամասնության կողմից և դրան հաջորդել է իշխանական և ընդդիմադիր կուսակցությունների լայն քաղաքական համաձայնությունը ժողովրդավարական ընտրությունների նախապայմանների ուժեղացման միջոցների վերաբերյալ: Քաղաքացիական հասարակությունը բանակցություններում կառուցողական ներգրավվածություն է ունեցել, թեև վերջնական Ջամաձայնությունը չի ստորագրել:

Չարկ է նշել, որ քաղաքացիական հասարակության ներկայացուցիչներն իրենց վերջին հայտարարությամբ⁶ հստակ նշել են Ջամաձայնությունը չստորագրելու պատճառները և հիմնավորումները, որոնք վկայում են, որ ընտրական գործընթացների վերաբերյալ լայն հասարակական համաձայնություն չի ձևավորվել:

⁶ Հայտարարությունը ընտրական օրենսգրքի և դրա շուրջ վերջին զարգացումների վերաբերյալ, <http://transparency.am/hy/news/view/1600>

Ընտրությունների միջազգային դիտորդական առաքելությունների հանձնարարականների արտացոլումը 2016թ. Ընտրական օրենսգրքում և դրանց իրականացումը 2017թ. ապրիլի 2-ի Ազգային ժողովի և մայիսի 14-ի Երևանու ավագանու ընտրությունների ժամանակ

2003թ.-ից ի վեր միջազգային կառույցների կողմից ներկայացվել է ավելի քան 250 հանձնարարական, որից ավելի քան 60-ը սույն օրենսգրքի վերաբերյալ:

Սույն հետազոտության մեջ գնահատվել է 2003թ.-ից ի վեր ներկայացված գնահատականների արդիականությունը, արտացոլումը 2016թ. Ընտրական օրենսգրքում և դրանց իրականացումը 2017թ. ապրիլի 2-ի Ազգային ժողովի և մայիսի 14-ի Երևանու ավագանու ընտրությունների համատեքստում:

Մատչելիություն. Ընտրատեղամասերի մատչելիության վերաբերյալ հանձնարարականներ են ներկայացվել ԵԽԽԿ-ի, ԵԱՀԿ/ԺՅՄԻԳ և Վենետիկի Հանձնաժողովի կողմից: Հայաստանի Հանրապետության կառավարությանը առաջարկվել էր հաշմանդամություն ունեցող անձանց համար ընտրատեղամասերը և քվեատուփերը դարձնել հասանելի: Ինչպես նաև առաջարկվել է, որ նրանք, ովքեր հիվանդանոցում են կամ ֆիզիկապես անկարող են հասնել ընտրատեղամաս, հնարավորություն ունենան օգտվել քվեարկելու իրենց իրավունքից՝ շարժական քվեատուփերի կամ այլ միջոցով: Օրենսգրքով սահմանվում է միայն հիվանդանոցներում ստացիոնար բուժում ստացող հիվանդների քվեարկության հնարավորությունը: Մինչ 2017թ. տեղի ունեցած ընտրությունների ժամանակ տեղամասերի մեծ մասը անմատչելի է եղել անվասայլակով տեղաշարժվող ընտրողների համար: Ընտրական օրենսգրքի երկրորդ ընթերցումից առաջ առաջարկվել է օրենսգրքով ամրագրել, որ տեղամասային կենտրոններն ընտրվեն հաշվի առնելով

հենաշարժողական խնդիրներ ունեցող անձանց ինքնուրույն քվեարկելու հնարավորությունը, սակայն կառավարությունն այն մերժել է՝ պատճառաբանելով, որ ամբողջ հանրապետության տարածքում մատչելի տեղամասեր ապահովելն անհնար է: Տեղամասային կենտրոնների մատչելիության ապահովման համար պատասխանատու է սահմանվել տեղական ինքնակառավարման մարմինը, սակայն հստակ չէ չափանիշների ներկայացման և վերահսկողության մեխանիզմը:

2016թ. նոյեմբերի 22-ին ՀՀ ԿԸՀ-ն ընդունել է քվեարկության դժվարություններ ունեցող անձանց համար քվեարկությունը մատչելի դարձնելու նպատակով լրացուցիչ հնարավորություններ սահմանելու մասին որոշում, որը սակայն պարտադիր կատարման մեխանիզմներ չի սահմանում:⁷

«Անկախ դիտորդ» հասարակական դաշինքի կողմից 2017թ. Աժ ընտրությունների ժամանակ դիտարկված 200 տեղամասերից միայն 20 տոկոսն է գնահատվել լիովին մատչելի, իսկ ԵԱՀԿ/ԺՅՄԻԳ-ի կողմից դիտարկված տեղամասերի 69 տոկոսը հենաշարժողական խնդիրներ ունեցող անձանց համար մատչելի չի եղել:⁸ «Անկախ դիտորդ» դաշինքի կողմից դիտարկված տեղամասերի մոտ 48 տոկոսում տեսողության կամ լսողության խնդիրներ ունեցող անձանց քվեարկությունը դյուրինացնելու նպատակով հատուկ միջոցներ առկա չեն եղել: Ուստի ՀՀ ԿԸՀ-ի կողմից կայացված վերոնշյալ որոշումը այս առումով գործնականում որևէ նշանակություն չի ունեցել, քանի որ տեղամասերի մեծ մասը 2017թ. Աժ ընտրությունների ժամանակ կրկին անմատչելի է եղել: Հարկ է նշել նաև, որ ՀՀ ԿԸՀ-ն քվեարկությունը մատչելի դարձնելու նպատակով ձեռնարկված գործողությունների վերաբերյալ որևէ հաշվետվություն չի ներկայացրել:

Ըստ ՀՀ ԿԸՀ-ի կողմից տրամադրված տվյալների՝ 2017թ. ապրիլի

⁷ http://res.elections.am/images/dec/16.136_N.pdf

⁸ OSCE/ODIHR Election Observation Mission Final Report, <http://www.osce.org/odihr/328226?download=true>

2-ի ԱԺ ընտրությունների քվեարկության օրը 70.488 ընտրող օգնությամբ է քվեարկել (քվեարկությանը մասնակցած ընտրողների ընդհանուր թվի 4.5 տոկոսը): «Անկախ դիտորդ» հասարակական դաշինքի կողմից դիտարկված տեղամասերի 22 տոկոսում արձանագրվել են օգնողների տվյալները չգրանցելու դեպքեր, ուստի օգնությամբ քվեարկած անձանց իրական թիվը ավելին է եղել: Հարկ է նշել, որ օգնությամբ քվեարկած ընտրողների թիվը ուղիղ համեմատական է համապատասխան տեղամասերում Հանրապետական կուսակցության ստացած ձայների թվին, այսինքն որքան շատ են տեղամասում օգնությամբ քվեարկել, Հանրապետական կուսակցությունն այնքան ավելի մեծ թվով ձայներ է ստացել:

Փաստացի տեղամասերի կամ քվեարկության անմատչելիությունը ոչ միայն մեծ թվով ընտրողների գրկել է ինքնուրույն քվեարկելու հնարավորությունից, այլ նաև օգնությամբ քվեարկելու հնարավորությունը չարաշահվել է հօգուտ իշխող կուսակցության՝ ոտնահարելով քաղաքացիների ընտրական իրավունքները և արժանապատվությունը: Արձանագրվել են բազմաթիվ դեպքեր, երբ ինչ-որ անձինք գտնվել են տեղամասերի մոտակայքում, ովքեր ակնհայտ կազմակերպված կերպով ընտրողներին օգնելու «գործառույթ» են իրականացրել:

Տեղամասերի մատչելիության և օգնության հնարավորության չարաշահումների վերաբերյալ առավել մանրամասն ներկայացված է 2017թ. ՀՀ Ազգային ժողովի ընտրությունների վերաբերյալ «Անկախ դիտորդ» դաշինքի վերջնական զեկույցում:⁹

Այսիպիսով, 2017թ. ԱԺ ընտրությունների ժամանակ մատչելիության վերաբերյալ միջազգային դիտորդական առաքելությունների հանձնարարականները չեն կատարվել:

Ընտրական վեճերի լուծում: Վեճերի լուծման գործընթացի վերաբերյալ ԵԱՀԿ/ԺՅՄԻԳ-ը և Վենետիկի հանձնաժողովը բազմաթիվ

⁹ 2017թ. ապրիլի 2-ի ՀՀ Ազգային ժողովի ընտրություններ, «Անկախ դիտորդ» հասարակական դաշինքի Վերջնական Ձեկույց, <http://hcav.am/wp-content/uploads/2017/07/NA-report.pdf>

հանձնարարականներ են ներկայացրել: Հանձնարարականները վերաբերել են բողոքարկման գործընթացի հստակեցումներին, ներառյալ, թե ով և ինչպես կարող է դիմումներ և բողոքներ ներկայացնել, բողոքարկման ժամկետներին, բողոքների պատշաճ քննությանը և հիմնավորված որոշումների կայացմանը, ընտրախախտումներ կատարողներին քրեական և/կամ վարչական պատասխանատվության ենթարկելուն, բողոքների արդյունավետ քննության նպատակով համապատասխան պետական կառույցների միջև համագործակցության խորացմանը: Առաքելությունները ԿԸՀ-ին կոչ են արել ավելի ակտիվ դեր ստանձնել բողոքների քննության ընթացքում:

Չնայած տեղական դիտորդներին բողոքներ և դիմումներ ներկայացնելու իրավունքի ընձեռնման վերաբերյալ հորդորներին՝ նրանց նման իրավունք չի տրվում նաև սույն օրենսգրքով, և դիտորդները կարող են բողոքներ ներկայացնել միայն իրենց սուբյեկտիվ իրավունքների խախտման դեպքերում:

Թեև բողոքարկման ժամկետների և պայմանների հետ կապված Վենետիկի հանձնաժողովի և ԵԱՀԿ/ԺՅՄԻԳ-ի կողմից Նախնական միացյալ կարծիքում ներկայացված որոշ հանձնարարականներ 2016թ. Ընտրական օրենսգրքում հաշվի են առնվել, սակայն քաղաքացիների խմբերին բողոքարկման իրավունք շնորհելու, նաև վերահաշվարկի ժամկետների վերաբերյալ հանձնարարականները չեն կատարվել:

Ընտրական վեճերի հետ հետ կապված այն հանձնարարականները, որոնք վերաբերում են իրավակիրառ պրակտիկային, մասնավորապես, բողոքների պատշաճ քննությանը և հիմնավորված որոշումների կայացմանը, համապատասխան մարմինների կողմից անտեսվել են 2017թ. թե՛ Ազգային ժողովի, թե՛ Երևանի ավագանու ընտրությունների ժամանակ:

Ստորև ամփոփ կերպով ներկայացված է վերոնշյալ ընտրությունների ժամանակ ներկայացված հիմնական բողոքների

քննության արդյունքների մասին:

Ըստ ընտրությունների արդյունքների վերաբերյալ ՀՀ ԿԸՀ 2017թ. ապրիլի 9-ի որոշման¹⁰ մինչև Ազգային ժողովի ընտրությունների քվեարկության օրը ՀՀ ԿԸՀ է ներկայացվել 18 դիմում-բողոք, որոնցից 2-ով «ԵԼԲ» և «Օհանյան-Րաֆֆի-Օսկանյան» կուսակցությունների դաշինքները պահանջել են Հայաստանի հանրապետական կուսակցության գրանցումն ուժը կորցրած ճանաչելու հայցով դիմել դատարան այն բանից հետո, երբ «Իրազեկ քաղաքացիների միավորում» ՀԿ-ի կողմից հրապարակված ձայնագրությունների շնորհիվ հայտնի դարձավ, որ 114 դպրոցների և մանկապարտեզների տնօրեններ ընդունել են, որ Հայաստանի հանրապետական կուսակցության համար ընտրողների ցուցակներ են կազմել և հանձնել համապատասխան անձանց, նրանցից մեկը նույնիսկ նշել էր, որ «ամենավերջին ձևերով վախեցրել են»: 1 դիմում բողոքով ճաղկալանջ գյուղում ասֆալտապատման խոստում տալու և մեկ այլ գյուղում ասֆալտապատում իրականացնելու համար պահանջվել է ՀՀԿ թեկնածու Առաքել Մովսիսյանի գրանցումը ուժը կորցրած ճանաչելու պահանջով դիմել դատարան: Մնացած դիմումները վերաբերել են նախընտրական քարոզչության կանոնների խախտումներին: Դիմումներից 12-ը մերժվել են՝ ներառյալ ՀՀԿ-ի և ՀՀԿ թեկնածու Առաքել Մովսիսյանի գրանցումը ուժը կորցրած ճանաչելու հարցով դատարան դիմելու դիմումները: Թեև մերժված դիմումներում ներկայացված փաստերը ԿԸՀ-ի կողմից քննվել են սեփական նախաձեռնությամբ հարուցված վարույթներում, դրանց կապակցությամբ պատշաճ և համարժեք որոշումներ չեն կայացվել, օր. ընտրակաշառք և ընտրակաշառքի խոստումներ տալու դեպքում ԿԸՀ-ն բավարարվել է միայն նախազգուշացումով:

ԵԱՀԿ/ԺՅՄԻԳ-ի վերջնական գեկոլյցում նույնպես ասվում է, որ թեև ԿԸՀ-ն երբեմն քննում էր հայտնի դարձած որոշ փաստեր, սակայն վիճելի հարցերը մանրակրկտորեն չէր ուսումնասիրում, օր. ուսուցիչների վրա հնարավոր ճնշումները և ահաբեկումը

¹⁰ Ընտրությունների արդյունքների վերաբերյալ ՀՀ ԿԸՀ 2017թ. ապրիլի 9-ի որոշում, http://res.elections.am/images/dec/17.162_%D0%90.pdf

ստորագրություններ հավաքելու համար:

ԿԸՅ-ի կողմից կայացված որոշումների դեմ Վարչական դատարան է ներկայացվել 6 հայցադիմում, որոնցից բոլորը մերժվել են կամ կարճվել:

Իշխանական Յայ հեղափոխական դաշնակցություն կուսակցության կողմից ներկայացված դիմումով համապատասխան Տարածքային Ընտրական հանձնաժողովը Փարպի գյուղի մեկ տեղամասի քվեարկության արդյունքներն անվավեր է ճանաչել, սակայն 3 տեղամասում քվեարկության արդյունքներն անվավեր ճանաչելու վերաբերյալ ընդդիմադիր «Կոնգրես-ՅԺԿ» դաշինքի ներկայացրած դիմումը մերժվել է:

2017թ. ապրիլի 7-ին «Կոնգրես-ՅԺԿ» դաշինքը ՅՅ ԿԸՅ է ներկայացրել ԱԺ ընտրությունների արդյունքներն անվավեր ճանաչելու մասին դիմում, որը մերժվել է հիմնականում այն հիմքով, որ ներկայացված դիմումը իրավական հիմնավորումների և ընտրախախտումների ապացուցողականության տեսանկյունից հիմնազուրկ է եղել: Ընտրախախտումների հետ կապված ՅՅ ԿԸՅ-ի հիմնական դիրքորոշումն այն է, որ դրանք եղել են եզակի, առանձին դեպքեր են և ընտրությունների արդյունքների վրա որևէ ազդեցություն ունենալ չէին կարող: ՅՅ Ընտրական օրենսգրքի 49-րդ հոդվածի 6-րդ կետով ընտրական հանձնաժողովի որոշման դեմ բողոք ներկայացնողը կրում է իր կողմից ներկայացված փաստերի ապացուցման բեռը, իսկ հանձնաժողովը՝ իր կայացրած որոշման հիմքում ընկած փաստերի ապացուցման բեռը: Այս հիմքով ՅՅ ԿԸՅ-ն պնդում է, որ դիմումատուն խախտումների վերաբերյալ պատշաճ ապացույցներ չի ներկայացրել, պարզապես նշել է դատողություններ, միևնույն ժամանակ ՅՅ ԿԸՅ-ն ընտրությունների արդյունքների վերաբերյալ կայացրած որոշման մեջ և առհասարակ, պարզապես նշում է, որ խախտումները ընտրությունների արդյունքների վրա ազդեցություն չեն ունեցել՝ առանց որևէ կերպ դա ապացուցելու: «Կոնգրես-ՅԺԿ» դաշինքի դիմումի վերաբերյալ ԿԸՅ որոշումը բողոքարկվել է ՅՅ Սահմանադրական դատարան, որն այն ուժի մեջ է

թողել: 2017թ. մայիսի 16-ին «Երկիր Ծիրանի» կուսակցության կողմից ներկայացվել է մայիսի 14-ի Երևանի ավագանու ընտրությունների արդյունքներն անվավեր ճանաչելու մասին դիմում, որը նույնպես ԿԸՅ-ի կողմից մերժվել է:

Աժ ընտրությունների նախապատրաստման և անցկացման փուլում ՀՀ Գլխավոր դատախազությունում ուսումնասիրվել է 923 ընտրախախտումների վերաբերյալ ահագանգ, որոնցից ընդամենը 20 դեպքով է հարուցվել քրեական գործ: Հարուցված քրեական գործերից 5-ի վարույթը կարճվել է հանցակազմի բացակայության հիմքով: Երևանի ավագանու ընտրությունների ժամանակ ստացվել է 124 հաղորդում, սակայն հարուցվել է ընդամենը 10 քրեական գործ:¹¹

Աժ ընտրություններից հետո համացանցում հրապարակվեց ՀՀԿ-ի թեկնածու Արտակ Սարգսյանին պատկանող «ՍԱՍ գրուպ»-ի աշխատակիցների մասնակցությամբ տեղի ունեցած ժողովի ձայնագրություն, որտեղ նրանցից պահանջվում էր Արտակ Սարգսյանի օգտին ձայներ հավաքել՝ խոստանալով խրախուսել «չատ ձայներ բերողներին» և պատժել «վատ աշխատողներին»: Դեպքի հետ կապված հարուցվել է քրեական գործ, որի ընթացքի վերաբերյալ որևէ տեղեկատվություն հայտնի չէ:

2017թ. մայիսի 14-ի Երևանի ավագանու ընտրություններից առաջ «ԵԼԲ» դաշինքը ՀՀԿ թեկնածու Տարոն Մարգարյանի շտաբերից մեկում ընտրակաշառք բաժանելու և նույն շտաբի հարակից աղբարկղից կազմակերպված և լայնամասշտաբ կերպով ընտրակաշառք բաժանելու մասին վկայող փաստաթղթերի վերաբերյալ տեղեկատվություն է տարածել: «ԵԼԲ» դաշինքը դիմել է ՀՀ ԿԸՅ ՀՀԿ-ի գրանցումն ուժը կորցրած ճանաչելու պահանջով դատարան դիմելու համար, որը նույնպես մերժվել է:

Քարոզարշավի Ֆինանսավորում. ԵԱՀԿ/ԺՅՄԻԳ-ի և Վենետիկի հանձնաժողովի կողմից ներկայացվել են մի շարք

¹¹ 14.07.2017 | Ամփոփ տեղեկատվություն ապրիլի 2-ի Աժ և մայիսի 14-ի Երևանի ավագանու ընտրություններում իրավախախտումների քննության ընթացքի և արդյունքների մասին, <http://www.prosecutor.am/am/mn/6886/>

հանձնարարականներ, որոնք առաջարկում են քարոզարշավի ֆինանսավորման կարգավորման վերաբերյալ ավելի հստակ դրույթներ սահմանել, այդ թվում՝ նախատեսելով ծախսերի ցանկի ընդլայնում՝ ավելի մանրամասն ներկայացնելու համար, հաշվետվության պահանջների և պատշաճ վերահսկման ցուցանիշների հստակեցում:

Օրենսգրքով հնգապատկվել է ֆիզիկական անձանց կողմից կուսակցություններին նվիրաբերվող գումարի առավելագույն չափը, միաժամանակ հնգապատկվել է քարոզարշավի ֆինանսավորման թույլատրելի առավելագույն գումարը, այնուամենայնիվ, քարոզարշավի ծախսերի ցանկը չի ընդլայնվել և չի ներառում անձնակազմի վարձատրությունը, նախընտրական շտաբի վարձակալությունը կամ ճանապարհածախսը:

Նախընտրական հիմնադրամներ կատարվող մուծումների, ծախսերի և դրանց հաշվարկման, ինչպես նաև կուսակցությունների ընթացիկ ֆինանսական գործունեության նկատմամբ վերահսկողություն է իրականացնում վերահսկիչ-վերստուգիչ ծառայությունը:

Ընտրական օրենսգրքով և ԿԸՀ-ի համապատասխան որոշմամբ¹² ծառայությանը վերապահված է ստանալ տեղեկատվություն նախընտրական հիմնադրամներ կատարված ֆինանսական ելքերի և մուտքերի վերաբերյալ, ինչպես նաև ստանալ հայտարարագրեր, այլ տեղեկանքներ, փաստաթղթեր հիմնադրամների միջոցներով կատարված ծախսերի վերաբերյալ, դրանց ստուգման արդյունքում պատրաստել եզրակացություն և տրամադրել ԿԸՀ-ին: Թե՛ Ազգային ժողովի, թե՛ Երևանի ավագանու ընտրությունների վերաբերյալ պատրաստած եզրակացություններում ծառայությունը կուսակցությունների և դաշինքների կողմից ներկայացված

¹² ԿԸՀ որոշում վերահսկիչ-վերստուգիչ ծառայության գործունեության կարգը հաստատելու մասին, http://res.elections.am/images/dec/16.39_N.pdf

հայտարարագրերում որևէ խախտում չի հայտնաբերել: ¹³
Այնուամենայնիվ, հայտնի չէ, թե կուսակցությունների կողմից
որքանով է ամբողջական տեղեկատվություն ներկայացվել և ինչ
մեթոդներով է ստուգում իրականացվել:

Չարկ է նշել, որ ո՛չ Ընտրական օրենսգրքով, և ո՛չ ԿԸՅ-ի
համապատասխան որոշմամբ վերահսկիչ-վերստուգիչ ծառայության
կողմից կուսակցությունների ընթացիկ ֆինանսական
գործունեության նկատմամբ վերահսկողության իրականացման
մեխանիզմներ սահմանված չեն և, առհասարակ, անհստակ է, թե
օրենսդիրը և ԿԸՅ-ն այդ դրույթով կոնկրետ ինչ գործառույթ են
նախատեսել վերահսկիչ-վերստուգիչ ծառայության համար: Թեև
վերահսկիչ-վերստուգիչ ծառայության անկախության ապահովման
վերաբերյալ Վենետիկի հանձնաժողովի հանձնարարականի
արդյունքում օրենսգրքում ավելացվեց, որ ծառայությունը գործում է
ընտրական հանձնաժողովներից անկախ և հաշվետու չէ նրանց,
սակայն ծառայության ղեկավարը նշանակվում է ԿԸՅ-ի կողմից և
հանրության կողմից այն չի ընկալվում որպես անկախ և իրական
վերահսկողական գործառույթ իրականացնող մարմին:

Քարոզարշավի ֆինանսավորման վերաբերյալ
հանձնարարականները, ըստ էության, չեն իրականացվել:

Թեկնածուների Գրանցում. Թեկնածուների գրանցման
գործընթացի վերաբերյալ ներկայացվել են մի շարք
հանձնարարականներ, այդ թվում՝ թեկնածուներին ներկայացվող
պահանջների (ստորագրություններ, գրավ, ժամկետներ),
թեկնածուների գրանցումը չեղյալ հայտարարելու կարգի

¹³ ՀՀ ԿԸՀ վերահսկիչ-վերստուգիչ ծառայության եզրակացություն ԱԺ 2017թ. ապրիլի 2-ի
ընտրություններին մասնակցող կուսակցությունների և կուսակցությունների դաշինքների
նախընտրական հիմնադրամներում եղած միջոցների օգտագործման վերաբերյալ
հայտարարագրերի ստուգման արդյունքների,
<http://res.elections.am/images/audit/conclusion02.04.17m3.pdf>

¹³ ՀՀ ԿԸՀ վերահսկիչ-վերստուգիչ ծառայության եզրակացություն Երևանի ավագանու 2017թ.
մայիսի 14-ի ընտրություններին մասնակցող կուսակցությունների և կուսակցությունների
դաշինքների նախընտրական հիմնադրամներում եղած միջոցների օգտագործման վերաբերյալ
հայտարարագրերի ստուգման արդյունքների,
<http://res.elections.am/images/audit/conclusion14.05.17m3.pdf>

վերաբերյալ: Ստորագրություններ ներկայացնելու պահանջը վերացվել է 2003թ.-ին, սակայն ընտրագրավի գումարի չափը դեռևս խնդրահարույց է, իսկ գրավի վերադարձման համար սահմանված նվազագույն շեմը նվազեցվել է, բայց ոչ բավարար չափով: Նույն կերպ նվազեցվել է ՀՀ-ում մշտական բնակության ժամանակահատվածի պահանջը, սակայն օրենսգրքով սահմանվող չորս տարին ևս համարվում է չարդարացված: Արտահերթ ընտրությունների ժամանակ, օրենսգրքով սահմանված թեկնածուների գրանցման ժամկետը խիստ սեղմ է, ինչը սահմանափակում է ազատ մրցակցության հնարավորությունը: ԵԱՀԿ/ԺՀՄԻԳ-ի առաքելությունն անդրադարձել է թեկնածուների գրանցումը չեղյալ համարելու կարգավորմանը՝ թեկնածուների պարտադրված հրաժարականից խուսափելու համար: Թեև թեկնածուների գրանցումը չեղարկելու հիմքերը հստակեցված են, փոխարենը ավելի ազատ է ինքնաբացարկի հնարավորությունը, որը տարածված է հատկապես ՏԻՄ ընտրությունների ընթացքում՝ ենթադրաբար անազնիվ մրցակցության պատճառով:

2017թ. Ազգային ժողովի և Երևանու ավագանու ընտրությունների ժամանակ թեկնածուների գրանցման հետ կապված խնդիրներ չեն արձանագրվել, սակայն 2017թ. Ազգային ժողովի ընտրություններից հետո «Ճառուկյան» դաշինքի հետ կապված միջադեպ տեղի ունեցավ: Այն բանից հետո, երբ ԿԸՀ-ն հրապարակեց ինքնաբացարկ ներկայացրած անձանց անունները, ըստ որի «Ճառուկյան» դաշինքից ինքնաբացարկի դիմում էր ներկայացրել 23 թեկնածու, այդ անձանցից 12-ը հայտարարեցին, որ ինքնաբացարկի դիմումներ չեն ներկայացրել և պահանջեցին իրենց անունից տրված դիմումները չեղարկել: Ադյունքում ԿԸՀ-ն նրանցից անցողիկ տեղերում գտնվող անձանց՝ 8 հոգու, մանդատ տրամադրեց: Այդ թեկնածուներից մեկը Ազատություն ռադիոկայանին ասել է, որ «նման դիմումներ գրվել են» մինչև քվեարկության օրը, որ եթե ինչ-ինչ պատճառներով թեկնածությունից հրաժարվելու անհրաժեշտություն լինի, իրենց համաձայնությամբ այդ դիմումները ներկայացվեն ԿԸՀ, սակայն թեկնածուի պնդմամբ մանդատից հրաժարվելու մասին

դիմումներ ներկայացնելն իրենց հետ չի համաձայնեցվել:¹⁴ Ուստի կուսակցության ներսում որոշումների կայացման ոչ ժողովրդավարական մեթոդների պատճառով ինքնաբացարկի հնարավորությունը չարաշահվել է նաև վերջին ընտրությունների ժամանակ:

Այսպիսով թեկնածուների գրանցման հետ կապված հանձնարարականներն իրականացվել են մասամբ:

Կենտրոնական ընտրական հանձնաժողով.

ԵԱՀԿ/ԺՅՄԻԳ-ը և Վենետիկի հանձնաժողովը ԿԸՀ վերաբերյալ ներկայացրել են մի քանի հանձնարարական: 2016թ. սահմանադրական փոփոխություններով և վերջին Ընտրական օրենսգրքով փոխվել է ԿԸՀ-ի ձևավորման կարգը: Այժմ ԿԸՀ-ի անդամներին նշանակում է Ազգային ժողովը՝ մեծամասնությամբ, ինչի հետ կապված միջազգային դիտորդական առաքելությունները կարևորում են նոր ձևավորվող ԿԸՀ-ի նկատմամբ խորհրդարանում ներկայացված բոլոր կուսակցությունների վստահությունը: ԿԸՀ-ի հետ կապված մյուս հանձնարարականներն իրականացվել են:

Չարկ է նշել, որ 2017թ. հունիսի 15-ին Եվրոպայի խորհրդի կողմից կազմակերպված «Ընտրական գարգացումները Չայաստանում. Քաղված դասերը և հետագա քայլերը» թեմայով համաժողովին ՅՅ-ում Եվրամիության պատվիրակության ղեկավար, դեսպան Պյոտր Սվիտալսկին ի թիվս այլ ուղերձների, որոնք վերաբերում էին Ընտրական օրենսգրքի բարեփոխմանը, տարածքային ցուցակների անհրաժեշտության վերանայմանը և այլն, կոչ արեց նաև դիտարկել ԿԸՀ-ի կազմավորման սկզբունքների փոփոխումը, մասնավորապես կառույցի կազմում քաղաքացիական հասարակության ներկայացուցիչների ընդգրկումը՝ այն հանրության աչքին ավելի արժանահավատ դարձնելու նպատակով:¹⁵ Դեսպանի արտահայտությունն իշխանության ներկայացուցիչների կողմից

¹⁴ «Ծառուկյան» դաշինքից ինքնաբացարկի դիմումը հետ վերցրած թեկնածուներից 8-ը մանդատ ստացավ, Ազատություն ռադիոկայան, 03 մայիսի, 2017, <https://www.azatutyun.am/a/28466254.html>

¹⁵ Սվիտալսկի. ԿԸՀ-ի կազմում պետք է ներգրավվեն քաղհասարակության ներկայացուցիչներ, ՀԱՅԱՍՏԱՆ 24, հունիսի 15, 2017 <http://hayastan24.com/?p=17519&l=am>

մեկնաբանվեց որպես միջամտություն ԶԶ ներքին գործերին:¹⁶

Քաղաքացիական դիտորդներ. Անկախ դիտորդների կողմից դիտորդություն իրականացնելու վերաբերյալ ներկայացվել էին մի քանի հանձնարարականներ:

Միջազգային դիտորդական առաքելությունները և Վենետիկի հանձնաժողովը գտնում էին, որ պետք է վերացվի դիտորդների կողմից պարտադիր ստուգարքի հանձնումը և մեկ դիտորդի կողմնակալության պատճառով դիտորդական կազմակերպության հեռացման հնարավորությունը: 2016թ. հունիսի 30-ին ընդունված փոփոխություններով վերացվեց դիտորդների համար սահմանված ստուգարքի պահանջը, միաժամանակ սահմանվում է, որ դիտորդի կողմից որևէ թեկնածուի, ընտրություններին մասնակցող որևէ կուսակցության աջակցելու, ինչպես նաև Օրենսգրքի պահանջներն այն եղանակով խախտելու դեպքում, որն էապես խաթարում է ընտրական հանձնաժողովի բնականոն աշխատանքը կամ քվեարկության բնականոն ընթացքը, ընտրական հանձնաժողովի նախագահը կարող է դիտորդին հեռացնել հանձնաժողովի նիստից, իսկ քվեարկության օրը՝ տեղամասային կենտրոնից՝ ընտրական հանձնաժողովի անդամների ընդհանուր թվի ձայների առնվազն 2/3-ով ընդունված որոշմամբ:

Չարկ է նշել, որ Վենետիկի հանձնաժողովը նախկինում պաշտպանում էր դիտորդների ավելի քիչ իրավունքների գաղափարը և մերժում էր քվեարկության ընթացքում դիտորդների միջամտության ցանկացած հնարավորություն: Իր վերջին նկատառումներում Չանձնաժողովը առաջարկում է դիտորդներին ավելի շատ իրավունքներ ընձեռնել, ներառյալ ընտրական վեճերով ընտրական հանձնաժողովներին և դատարաններին դիմելու իրավունքը, այդ թվում՝ ընտրությունների արդյունքների բողոքարկման հարցով: Այնուամենայնիվ, Ընտրական օրենսգիրքը ավելի սահմանափակեց դիտորդների ներգրավվածությունը՝ դիտորդական

¹⁶ Մվիտալսկին փորձում է միջամտել ՀՀ ներքին գործերին. Դավիթ Հարությունյան (տեսանյութ), Ա1+, հունիսի 15, 2017, <http://www.a1plus.am/1550737.html>

կազմակերպությունների համար սահմանելով առնվազն մեկ տարի ժողովրդավարության և մարդու իրավունքների վերաբերյալ կանոնադրական նպատակներ ունենալու պահանջ, դիտորդներին զրկեց հանձնաժողովի նախագահին առաջարկություններ և դիտողություններ ներկայացնելու իրավունքից, սահմանվեց հանձնաժողովի քվեարկությամբ տեղամասից դիտորդին հեռացնելու դրույթը, թույլատրելով դիտորդին միայն պահանջել արձանագրել իր բողոքը գրանցամատյանում: Վենետիկի հանձնաժողովը և ԵԱՀԿ/ԺՅՄԻԳ-ը իրենց միացյալ կարծիքներում դրական չեն համարել հասարակական կազմակերպությունների կանոնադրական նպատակների հետ կապված պահանջը՝ այն համարելով անհարկի սահմանափակում, թեև դրական են գնահատել սահմանված ժամկետի կրճատումը:

ՀՀ ԿԸՀ-ն կամայականորեն հրաժարվել է օտարերկրյա հասարակական կազմակերպություններին 2017թ. Ազգային ժողովի ընտրությունների ժամանակ դիտորդություն իրականացնելու հրավեր տրամադրել այն դեպքում, երբ այդ իրավունքը սահմանված է Ընտրական օրենսգրքով: ԿԸՀ-ն դա պատճառաբանել է արդեն իսկ հավատարմագրված դիտորդների մեծ թվով: Թեև օտարերկրյա դիտորդները հնարավորություն ունեին տեղական կազմակերպությունների կողմից հավատարմագրվելու, սակայն օտարերկրյա հասարակական կազմակերպություններին դիտորդություն իրականացնելու՝ օրենքով սահմանված իրավունքից զրկելը հակասում է միջազգային սկզբունքներին և բացասաբար է գնահատվում: Ինչ վերաբերում է քվեարկության օրը դիտորդների իրավունքների իրացմանը, ապա որոշ տեղամասերում արձանագրվել են խչընդոտման, սպառնալիքների, բռնության դեպքեր, սակայն դրանք համատարած բնույթ չեն կրել:

Դիտորդների վերաբերյալ հանձնարարականները նույնպես մասամբ են իրականացվել:

Կոալիցիաներ և դաշինքներ. ԵԱՀԿ/ԺՅՄԻԳ-ը և Վենետիկի հանձնաժողովը հանձնարարականներ են ներկայացրել նաև Ընտրական օրենսգրքով սահմանված նախընտրական

կոալիցիաների և հետընտրական դաշինքների անդամների թվի և դրանց կազմավորման ժամկետների վերաբերյալ: Մասնավորապես, նրանք առաջարկել են վերանայել կոալիցիաների անդամների առավելագույն (երեք) թվի վերաբերյալ սահմանափակումը, երկարաձգել ընտրությունների առաջին փուլից հետո կոալիցիա կազմելու, ինչպես նաև ընտրությունների երկրորդ փուլից առաջ դաշինքներ ստեղծելու ժամկետները: Առաջարկվել է նաև տեղական ընտրությունների համար իջեցնել ընտրվելու շեմը և կուսակցություններին տալ կոալիցիաներ ստեղծելու հնարավորություն: Օրենսգրքում հաշվի են առնվել միայն կոալիցիաների ձևավորման ժամկետների և երկրորդ փուլից առաջ նախընտրական դաշինքների կազմման ժամկետների հետ կապված հանձնարարականները:

Նախընտրական քարոզարշավ. Նախընտրական քարոզարշավների կարգավորման հետ կապված մի քանի հանձնարարականներ են ներկայացվել, այդ թվում՝ քարոզչական նյութերի տարածման, քվեարկության օրը, հատկապես, ընտրատեղամասերին մոտ տարածքներում քարոզարշավի իրականացման արգելքի անհրաժեշտության, քարոզարշավի ընթացքը կարգավորող նորմերի խախտումների և կեղծ տեղեկատվության տարածման համար պատասխանատվության սահմանման, ինչպես նաև քարոզարշավի ժամանակահատվածի հստակեցման վերաբերյալ: Օրենսգրքով սահմանվում է, որ պարտադիր չէ քարոզչական պաստառների հեռացումը քվեարկության օրը և նախորդ օրը, ինչը հակասում է այդ օրերին քարոզչությունն արգելելու դրույթին: Բացի այդ, օրենսգրքով չարգելված ժամանակահատվածում իրականացվող քարոզչությունը որևէ կերպ կարգավորված չէ:

2017թ. Ազգային ժողովի ընտրությունների ժամանակ ընտրողներին այս կամ այն կերպ որևէ կուսակցության օգտին կողմնորոշող միջոցառումներ արձանագրվել են «Անկախ դիտորդ» դաշինքի կողմից դիտարկված տեղամասերի 17 տոկոսում, իսկ

Երևանի ավագանու ընտրությունների ժամանակ՝ 22 տոկոսում՝ մեծ մասամբ Հայաստանի հանրապետական կուսակցության օգտին, թեև օրենքով քվեարկության օրը քարոզչությունն արգելվում է: Քարոզչական պաստառները այս ընտրությունների ժամանակ նույնպես քվեարկության օրը և քվեարկության նախորդ օրը ամբողջությամբ չեն հեռացվել:

2017թ. Ազգային ժողովի ընտրությունների նախընտրական քարոզչության ընթացքում «Անկախ դիտորդ» դաշինքի երկարաժամկետ դիտորդների կողմից արձանագրվել է չսահմանված վայրերում քարոզչական նյութեր փակցնելու 159, իսկ քարոզչական պաստառների վնասման 109 դեպք:¹⁷ Արձանագրվել են գրեթե բոլոր կուսակցությունների պաստառների վնասման դեպքեր, սակայն առավել հաճախակի վնասել են ԵԼՔ դաշինքի թեկնածու Էդմոն Մարուքյանի պաստառները ք. Վանաձորում: Դեպքերից միայն մեկին անդրադառնալով՝ ոստիկանությունը հայտարարություն է տարածել, որ երկու անչափահաս երեխաներ են խաղալիս անգիտակցաբար պատռել պաստառները¹⁸, մինչդեռ առկա է տեսանյութ, որտեղ հստակ երևում է, որ պաստառները պոկողները չափահաս անձինք են և դրանց վնասման համատարած բնույթը վկայում է այն մասին, որ ոստիկանության հայտարարությունը ընտրողական է և անարժանահավատ: Այս դեպքերով պատշաճ քննություն չի իրականացվել և որևէ մեկը պատասխանատվության չի ենթարկվել, թեև քարոզչական պաստառներ փակցնելու համար առանձնացված տեղերում փակցված քարոզչական պաստառները վնասելու համար Վարչական իրավախախտումների մասին ՀՀ օրենսգրքով նախատեսված է 50.000-ից մինչև 100.000 դրամ տուգանք: Հարկ է նշել նաև, որ չսահմանված վայրերում քարոզչական նյութեր փակցնելու համար որևէ տուգանք կամ պատիժ նախատեսված չէ:

¹⁷ «Անկախ դիտորդ» հասարակական դաշինք: Նախընտրական քարոզչության երկարաժամկետ դիտարկման զեկույց: ԱԺ ընտրություններ 2017, մարտ 2017 <http://hcav.am/publications/1235541263/>

¹⁸ Իմ պաստառը պատռած այդ «անգիտակից երեխաներին» ամեն ծվենի համար 300 դրամ է տրվել. Էդմոն Մարուքյան, ԹԵՐԹ.am, մարտի 17, 2017թ., <http://www.tert.am/am/news/2017/03/13/edmonmarukian/2306357>

Նախընտրական քարոզչության կանոնների խախտման դեպքում օրենքով նախատեսված է, որ կուսակցության գրանցումն իրականացրած հանձնաժողովը կարող է դիմել իրավասու մարմիններին՝ դրանք կանխելու նպատակով կամ կիրառել նախազգուշացում: Նախընտրական քարոզչության շարունակական բնույթի խախտումների դեպքում հանձնաժողովը դիմում է դատարան կուսակցության գրանցումը ուժը կորցրած ճանաչելու համար: 2017թ. ընտրությունների ժամանակ այս առումով ԿԸՀ-ի ձեռնարկած գործողությունները ներկայացված են Ընտրական վեճերի լուծում բաժնում:

Նախընտրական քարոզչության հետ կապված առաջարկվող համապատասխան օրենսդրական կարգավորումները հիմնականում ներդրվել են, սակայն դրանց իրագործումն արդյունավետ չի եղել:

Ընտրական հանձնաժողովներ. Վենետիկի հանձնաժողովի և ԵԱՀԿ/ԺՀՄԻԳ-ի կողմից ներկայացվել են բազմաթիվ հանձնարարականներ, որոնք վերաբերում են հանձնաժողովների կողմից ընտրությունների անցկացմանը: Այս հանձնարարականները վերաբերում էին ընտրական հանձնաժողովների կազմին, հանձնաժողովների անդամների հեռացմանը, ընտրական խախտումների համար հանձնաժողովի անդամների պատասխանատվությանը, շարունակական վերապատրաստումներին, որոշումների կայացման թափանցիկությանը, հանձնաժողովի ղեկավար պաշտոնների արդար բաշխմանը, և ԸԸՀ տարածքների առանձնացմանը կենտրոնական և տեղական իշխանության շենքերից:

Ինչ վերաբերում է ՏԸՀ կազմին, ըստ տեղական դիտորդների, չնայած անդամների թվացյալ բազմակուսակցականությանը, ՏԸՀ-ները հիմնականում ծառայում են իշխող՝ Յանրապետական կուսակցությանը և ոչ միշտ են հակված խախտումների դեպքում գործողություն ձեռնարկել: ՏԸՀ անդամները նշանակվում են Ազգային ժողովում խմբակցություն ունեցող կուսակցությունների կողմից՝ ըստ պատգամավորների թվի համամասնության, ինչը մեկնարկային

առավելությունն է տալիս իշխող կուսակցությանը և անհավասար պայմաններ է ստեղծում հատկապես ԱԺ-ում չներկայացված և ընտրություններին մասնակցող քաղաքական ուժերի համար: «Անկախ դիտորդ» դաշինքի դիտորդների գնահատմամբ ԱԺ ընտրությունների ժամանակ քվեարկության ընթացքում տեղամասերի 26 տոկոսում Տեղամասային ընտրական հանձնաժողովները խախտումները վերացնելու ուղղությամբ գործողություններ չեն ձեռնարկել, իսկ 27 տոկոսում մասամբ են ձեռնարկել կամ ոչ միշտ: Երևանի ավագանու ընտրությունների ժամանակ քվեարկության ընթացքում տեղամասերի 10 տոկոսում Տեղամասային ընտրական հանձնաժողովները խախտումները վերացնելու ուղղությամբ գործողություններ չեն ձեռնարկել, իսկ 28 տոկոսում մասամբ են ձեռնարկել կամ ոչ միշտ:

Արձանագրվել են դեպքեր, երբ ՏԸՀ-ները խտրական մոտեցում են ցուցաբերել, հիմնականում ի օգուտ իշխող կուսակցության, օր. ձայների հաշվարկի ժամանակ՝ քվեաթերթիկների վավերականության գնահատման գործընթացում կամ ընտրողին քվեաթերթիկների տրցակը հանձնելիս Հանրապետական կուսակցության քվեաթերթիկը դրել են վերևում:

Ընտրական օրենսգրքում հստակորեն սահմանված է հանձնաժողովների անդամների պաշտոնանկության կամ լիազորությունների դադարեցման կարգը և հիմքերը: ԱԺ ընտրությունների քվեարկության օրվանից հետո Տարածքային ընտրական հանձնաժողովների միջնորդությամբ 8 Տեղամասային ընտրական հանձնաժողովների նախագահների, իսկ Երևանի ավագանու ընտրություններից հետո՝ 10 Տեղամասային ընտրական հանձնաժողովների 19 անդամների որակավորման վկայականներն ուժը կորցրած են ճանաչվել ՀՀ ԿԸՀ-ի կողմից Ընտրական օրենսգրքի դրույթները խախտելու համար: ԱԺ ընտրություններից հետո 8 ՏԸՀ նախագահների որակավորման վկայականներն ուժը կորցրած են ճանաչվել մասնավորապես Ընտրական օրենսգրքի այն դրույթը խախտելու համար, ըստ որի հանձնաժողովի անդամը, վստահված անձը և դիտորդը իրավունք ունեն պահանջել, որ խախտումների

վերաբերյալ իրենց գնահատականները արձանագրվեն գրանցամատյանում: Ըստ «Անկախ դիտորդ» դաշինքի դիտորդների հաղորդած տվյալների՝ ԱԺ ընտրությունների ժամանակ դիտարկված տեղամասերի 20 տոկոսում (40 տեղամաս) խախտումները կամ գնահատականները գրանցամատյանում չեն գրանցվել, իսկ 30 տոկոսում (60 տեղամաս) ոչ միշտ են գրանցվել: Երևանի ավագանու ընտրությունների ժամանակ տեղամասերի 12 տոկոսում (7 տեղամաս) խախտումները կամ գնահատականները չեն գրանցվել, իսկ 13 տոկոսում (8 տեղամաս) ոչ միշտ են գրանցվել: Թեև դրական է ԱԺ ընտրություններից հետո ԿԸՀ-ի կողմից ՏԸՀ-ի նախագահների որակավորման վկայականներն ուժը կորցրած ճանաչելը, սակայն վերոնշյալ տվյալները ցույց են տալիս, որ տվյալ անձանց կողմից թույլ տված խախտումն արձանագրվել է նաև մի շարք այլ տեղամասերում, ուստի շատ ավելի մեծ թվով հանձնաժողովականների վկայականներն ուժը կորցրած ճանաչելու հիմքեր են եղել: Չարկ է նաև ընդգծել, որ հաջորդիվ տեղի ունեցած Երևանի ավագանու ընտրությունների ժամանակ խախտումները կամ գնահատականները չգրանցելու կամ ոչ միշտ գրանցելու դեպքերը շատ ավելի փոքր թվով տեղամասերում են արձանագրվել, որը թերևս արդյունք է ԿԸՀ-ի սույն որոշման:

Նոր Ընտրական օրենսգրքով նախատեսված քվեարկության գործընթացի արմատական փոփոխության համատեքստում առավել կարևորվում էր հանձնաժողովի անդամների վերապատրաստումը: 2017թ. թե՛ Ազգային ժողովի, թե՛ Երևանի ավագանու ընտրությունների ժամանակ «Անկախ դիտորդ» դաշինքի կողմից դիտարկված տեղամասերի 28 տոկոսում դիտորդները գնահատել են, որ հանձնաժողովի անդամները ոչ այնքան լավ են տիրապետել քվեարկության կարգին և իրենց գործառույթներին: Ազգային ժողովի ընտրությունների ժամանակ դիտարկված տեղամասերի 14 տոկոսում, իսկ Երևանի ավագանու ընտրությունների ժամանակ 7 տոկոսում հանձնաժողովի անդամները ոչ միշտ են անհրաժեշտության դեպքում ընտրողներին քվեարկության կարգը ներկայացրել:

2017թ. Ազգային ժողովի ընտրությունների ժամանակ «Անկախ դիտորդ» դաշինքը դիտարկել է նաև Տարածքային ընտրական հանձնաժողովների մեծ մասը: ՏԸՅ-ներում արձանագրված հիմնական խնդիրներից էր այն, որ գործառույթներն իրականացվում էին տարբեր սենյակներում, ինչի արդյունքում հանձնաժողովի ոչ բոլոր որոշումներն են կայացվել հանձնաժողովի բոլոր անդամների մասնակցությամբ: Տեղամասային և տարածքային ընտրական հանձնաժողովների գործունեության մասին ավելի մանրամասն ներկայացված է 2017թ. ապրիլի 2-ի ԱԺ ընտրությունների վերաբերյալ «Անկախ դիտորդ» դաշինքի վերջնական գեկույցի Ընտրական հանձնաժողովներ և Տարածքային հանձնաժողովների դիտարկում բաժիններում:

Այսպիսով հանձնաժողովների վերաբերյալ թե՛ օրենսդրությանը, թե՛ պրակտիկային վերաբերող հանձնարարականները մասամբ են իրականացվել և ընտրական վարչարարության արդյունավետության և վստահելիության բարձրացման տեսանկյունից դեռ շատ անելիքներ կան:

Ընտրական գործընթացների արդարությունը և իրավականությունը (Integrity) ԵԱՀԿ/ԺՅՄԻԳ-ը և ԵԽԽԿ-ն ընտրական գործընթացների արդարության և ընդհանուր իրավականության վերաբերյալ որոշ հանձնարարականներ են ներկայացրել, հատկապես շեշտադրելով ժողովրդավարական ընտրությունների անցկացման համար քաղաքական կամքը: Ընտրական գործընթացների արդարության և իրավականության տեսանկյունից հարկ է նշել, որ Ընտրական օրենսգիրքն ըստ էության չի անդրադառնում այն հիմնախնդիրներին, որոնք հանդիսացել են ընտրական գործընթացների նկատմամբ անվստահության պատճառը:

2017թ. գարնանը տեղի ունեցած ընտրությունների ժամանակ իրապես ազատ և անկախ ընտրություններ անցկացնելու գլխավոր խոչընդոտը քաղաքական կամքի բացակայությունն էր և իշխանությունների՝ ամեն գնով վերընտրվելու ձգտումը: Ուստի այս հանձնարարականների իրականացման առումով որևէ առաջընթաց

չի գրանցվել:

Հանձնարարականների իրականացում. ԵԱՀԿ/ԺՅՄԻԳ-ի, Վենետիկի հանձնաժողովի և ԵԽԽՎ-ի կողմից ՀՀ իշխանություններին կոչ է արվել իրականացնել իրենց կողմից ներկայացրած հանձնարարականները և համագործակցել քաղաքացիական հասարակության ու քաղաքական կուսակցությունների հետ՝ ապահովելով նրանց մասնակցությունը, ինչպես նաև համագործակցել ԵԽԽՎ-ի և Վենետիկի հանձնաժողովի հետ՝ հանձնարարականների իրականացման մոնիթորինգի գործընթացում: Նոր Ընտրական օրենսգրքի նախնական մշակման ոչ ներառական գործընթացը, և հետագա մասնակցության անարդյունավետությունը ցույց տվեց, որ այս հանձնարարականները անտեսվել են, թեև միջազգային կառույցները Ընտրական օրենսգրքի շուրջ իշխանության, ընդդիմության և քաղաքացիական հասարակության համագործակցության համար մեծ ջանքեր գործադրեցին և այն համարում էին աննախադեպ և հաջողված:

Կարելի է փաստել, որ առավելապես կազմակերպական հարցերին վերաբերող հանձնարարականները հաշվի են առնվել, մինչդեռ ավելի բովանդակային և ընտրությունների արդյունքների վրա ազդեցություն ունեցող հարցերի վերաբերյալ հանձնարարականները հիմնականում անտեսվել են: Օր. բողոքարկման ժամկետների հետ կապված հանձնարարականները ընդունվել են, մինչդեռ քաղաքացիների խմբերին կամ դիտորդներին բողոքարկման իրավունք շնորհելու և բողոքների արդյունավետ քննության վերաբերյալ հանձնարարականները՝ ոչ:

Սահմանադրական դատարանի որոշումների իրականացում և օրենսդրական համապատասխանություն.

Վենետիկի Հանձնաժողովի և ԵԱՀԿ/ԺՅՄԻԳ երկու հանձնարարականները հասցեագրված են Սահմանադրական դատարանի որոշումների արտացոլմանը ընտրական օրենսգրքում և օրենսդրական անհամապատասխանությունների վերացմանը: Հանձնարարականներից ոչ մեկը չի իրականացվել:

Լրատվամիջոցներ. Վենետիկի հանձնաժողովի, ԵԱՀԿ/ԺՀՄԻԳ-ի և ԵԽԽՎ-ի կողմից բազմաթիվ հանձնարարականներ են ներկայացվել լրատվական դաշտի կարգավորման վերաբերյալ, այդ թվում՝ լրատվամիջոցների ազատության երաշխավորման, եթերաժամանակի բաշխման, անկողմնակալ լուսաբանման ապահովման, կարգավորող մարմինների անկախության, արդար արտոնագրման գործընթացին, ինչպես նաև կանանց մասնակցության ավելի լայն լուսաբանմանը:

Բացառությամբ որոշ առցանց լրատվամիջոցների, մի քանի տպագիր մամուլի և մեկ մարզային հեռուստաընկերության, բոլոր լրատվական միջոցները վերահսկվում են իշխանության կողմից: Լրագրողների անկախությունը չի կարող ապահովվել, եթե նրանք ընտրությունների միջև ընկած ժամանակահատվածում անկախ չեն և նրանց նկատմամբ բռնությունները չեն պատժվում: Նախընտրական քարոզարշավների հավասարակշռված լուսաբանումը հետևողականորեն չի իրականացվել, և այն մեծապես կախված էր ԸՄԴԱ-ի ճնշումից: Համաձայն 2017թ. Ազգային ժողովի ընտրությունների վերաբերյալ ԵԱՀԿ/ԺՀՄԻԳ-ի վերջնական զեկուլյցի՝ մինչև նախընտրական քարոզչության պաշտոնական մեկնարկը դիտարկված հեռարձակվող հեռուստաընկերությունները ակնհայտ կողմնակալությամբ առաջնայնություն են տվել իրենց հետ ասոցացվող կուսակցություններին, մինչդեռ պաշտոնական քարոզչության շրջանում փոքր-ինչ ավելի հավասարակաշռված լուսաբանում է եղել, թեև ոչ լիովին: Այս փաստը վկայում է այն մասին, որ Ընտրական օրենսգրքի կարգավորումներն են հեռուստաընկերությունների համար որոշակի զսպող միջոց հանդիսացել, նրանց համար անկողմնակալությունը գործունեության սկզբունք չէ, և այս առումով նույնպես քարոզչության պաշտոնական ժամանակահատվածին նախորդող շրջանում կարգավորումների սահմանման կարիք կա:

Բռնությունների և մասնագիտական աշխատանքի խոչընդոտման դեպքեր գրանցվել են նաև այս ընտրությունների ընթացքում: Ըստ Խոսքի ազատության պաշտպանության կոմիտեի զեկուլյցի՝ 2017թ.

ապրիլի 2-ին՝ խորհրդարանական ընտրությունների օրը, լրատվամիջոցների ներկայացուցիչների նկատմամբ 2 ֆիզիկական բռնության և 9 ճնշման դեպքեր են գրանցվել: Երևանի ավագանու ընտրություններին նախորդող քարոզարշավի ընթացքում արձանագրվել է լրագրողների նկատմամբ բռնության 1 և խոչընդոտումների 2 դեպք: Ֆիզիկական բռնության 2 դեպք և մասնագիտական գործունեության խոչընդոտման 5 միջադեպ էլ գրանցվել է բուն ընտրությունների օրը՝ մայիսի 14-ին:¹⁹

Լրատվամիջոցներին վերաբերող լրացուցիչ կարգավորումներ են սահմանվել մասնավոր լրատվամիջոցների համար, օրինակ՝ ՀՌԱՀ-ի միջոցով: Ընտրական օրենսգրքով զանգվածային լրատվամիջոցների հետ կապված նոր մարտահրավեր է ՁԼՄ ներկայացուցիչների նախնական հավատարմագրման պահանջը և յուրաքանչյուր լրատվամիջոցը ներկայացնող անձանց թվի սահմանափակումը: Այսպիսով լրատվամիջոցների հետ կապված որոշ հանձնարարականներ հաշվի են առնվել, սակայն լիովին անկողմնակալ լուսաբանումը և լրատվամիջոցների անկախությունը չի ապահովվել:

Չինված ուժեր. Չինված ուժերի մասին հանձնարարականները վերաբերում են զինվորականների ընտրելու ազատ կամքի իրավունքին և ընտրական գործընթացների ընթացքում նրանց պարտավորություններին: Թեև նոր Ընտրական օրենսգիրքը, ինչպես և նախորդ օրենսգիրքը, սահմանում են, որ զինվորները տեղամաս ներկայանում են ոչ շարային կարգով, այնուամենայնիվ նրանց ազատ կամարտահայտումը չի ապահովվում, քանի որ տեղամաս են բերվում խմբերով՝ հրամանատարի հսկողությամբ: Ընտրական օրենսգիրքը նաև արգելում է գորամասերում հաշվառված ընտրողների թվի, նրանց քվեարկության տեղամասերի վերաբերյալ տեղեկատվության հրապարակումը:

¹⁹ Հայաստանում խոսքի ազատության վիճակի եւ լրագրողների ու ՁԼՄ-ների իրավունքների խախտումների մասին ԽԱՊԿ-ի 2017 թ. երկրորդ եռամսյակային զեկույց (ապրիլ-հունիս), <http://khosq.am/reports/հայաստանում-խոսքի-ազատության-վիճակի-11/>

2017թ. ընտրությունների ժամանակ զինվորների ընտրական իրավունքների իրացման հարցում որևէ առաջընթաց չի գրանցվել, նրանց ազատ կամարտահայտությունը կրկին լիարժեք կերպով չի ապահովվել:

Կանանց մասնակցությունը. ԵԱՀԿ/ԺՅՄԻԳ-ի կողմից ներկայացված հանձնարարականները վերաբերել են քվոտաների միջոցով կանանց մասնակցության խթանմանը, ինչպես նաև համապատասխան մանդատների ապահովմանը: Ընտրական օրենսգրքով վերանայվել է կուսակցությունների ընտրական ցուցակներում մեկ սեռի ներկայացվածության չափը՝ սահմանելով, որ մեկ սեռի ներկայացուցիչների թիվը թե՛ համապետական, թե՛ տարածքային ցուցակներում չի կարող գերազանցել 70%-ը՝ 2011թ. օրենսգրքով նախատեսված 80%-ի փոխարեն: Ի տարբերություն 2011թ. Ընտրական օրենսգրքի, նոր Օրենսգիրքը սահմանում է նաև երաշխիքներ քվեարկությունից հետո ՀՀ Ազգային ժողովում, ինչպես նաև Երևան, Վանաձոր և Գյումրի քաղաքների ավագանում, երկու սեռերի ներկայացվածության վերաբերյալ: Ըստ այդմ ընտրված թեկնածուի ինքնաբացարկի դեպքում մանդատը փոխանցվում է նույն սեռի հաջորդ թեկնածուին, եթե թեկնածուի ինքնաբացարկի արդյունքում մեկ սեռի ներկայացվածությունը տվյալ խմբակցությունում կարող է նվազել 25%-ից: Մինչև 2022 թ. այդ պահանջը ընտրական ցուցակների համար 25 տոկոս է, իսկ խմբակցությունների համար՝ 20 տոկոս: Միջազգային կառույցները նշում են, որ կանանց իմաստավոր մասնակցությունն ապահովելու համար պետք է սահմանվեր ավելի բարձր քվոտա:

Հարկ է նշել, որ քանի որ Ազգային ժողովի ընտրությունների ժամանակ յուրաքանչյուր կուսակցությանը/դաշինքին բաժին հասած մանդատների կեսը տրվում է տարածքային ցուցակներով անցած թեկնածուներին՝ անկախ սեռից, ուստի այս քվոտավորումը չի ենթադրում, որ նորընտիր Ազգային ժողովում յուրաքանչյուր խմբակցությունում կանանց թիվը չի կարող 20%-ից կամ 25%-ից պակաս լինել;

Ազգային ժողով անցած 4 քաղաքական ուժերն ընդհանուր թվով

ստացան 105 մանդատ, որից 19-ը տրվեց կանանց (18%):

- Հայաստանի հանրապետական կուսակցություն- 58 պատգամավոր, որից 8-ը կին (14%),
- «Ծառուկյան» կուսակցությունների դաշինք – 31 պատգամավոր, որից 8-ը կին (26%)
- «Ելք դաշինք» – 9 պատգամավոր, որից 2-ը կին (19%)
- Հայ հեղափոխական դաշնակցություն – 7 պատգամավոր, որից 1-ը կին (14%):

Այսպիսով, չնայած կանանց ներկայացվածության ապահովման նպատակով քվոտաների սահմանմանը, տարածքային ցուցակներով ռեյտինգային քվեարկության արդյունքում նորընտիր Ազգային ժողովում կանանց թիվը կրկին փոքր է, մինչդեռ մաքուր համամասնական ընտրակարգով ձևավորված Երևանի ավագանու կազմում կանանց թիվը զգալիորեն ավելի մեծ է:

2017թ. մայիսի 14-ի ընտրությունների արդյունքում Երևանի ավագանու անդամ դարձավ 65 անձ, որից 18-ը կանայք (28%).

- «Ելք» դաշինք – 14 անդամ, որից 5-ը` կին (36%)
- «Երկիր Ծիրանի» կուսակցություն – 5 անդամ, որից 3-ը` կին (60%)
- Հայաստանի հանրապետական կուսակցություն- 46 անդամ, որից 10-ը` կին (22%),

Վերոգրյալը վկայում է այն մասին, որ Ազգային ժողովում կանանց զգալի ներկայացվածության ապահովման համար սահմանված նոր երաշխիքները բավարար չեն և մաքուր համամասնական ընտրակարգը այս տեսանկյունից նույնպես լավագույն տարբերակն է:

Ուստի կանանց ներկայացվածության վերաբերյալ միջազգային հանձնարարականները մասամբ են կատարվել և թերակատարվել են

հատկապես Ազգային ժողովի ընտրությունների պարագայում:

Ոստիկանություն. Ոստիկանների վերապատրաստման և քվեարկության օրը ընտրատեղամասերում նրանց պարտականությունների մասին ԵԱՀԿ/ԺՅՄԻԳ-ի կողմից ներկայացվել է երկու հանձնարարական: Օրենսգրքով հստակեցվել է ոստիկանների դերը տեղամասի տարածքում, որն ավելի մանրամասն կերպով ներկայացվել է ոստիկանության աշխատակիցների համար մշակված ուղեցույցում: Որքանով մեզ հայտնի է, ոստիկանության ծառայողները հատուկ վերապատրաստում չեն անցել, նրանց պարզապես հրահանգվել է սերտել Ընտրությունների ժամանակ ոստիկանության գործողությունների ուղեցույցը:

Տեղամասային կենտրոններ. Տեղամասային կենտրոնների վերաբերյալ ներկայացված երեք հանձնարարականները ուղղված էին կողմնակի անձանց ներկայությանը, թափանցիկ արկղերի կիրառմանը և ընթացքի վերահսկման համար նպատակահարմար ընտրատեղամասի տարածքների տրամադրմանը:

2017թ. Ազգային ժողովի ընտրությունների ժամանակ «Անկախ դիտորդ» դաշինքի կողմից դիտարկված տեղամասերի 36 տոկոսում արձանագրվել են տեղամասում ներկա գտնվելու իրավունք չունեցող անձանց ներկայության դեպքեր, իսկ Երևանի ավագանու ընտրությունների ժամանակ տեղամասերի 37 տոկոսում են նման դեպքեր նկատվել: Այդ անձինք հիմնականում եղել են օրենքով թույլատրված թիվը գերազանցող թվով վստահված անձինք կամ դիտորդներ, ինչպես նաև ԿԸՅ-ի կողմից չհավատարմագրված, բայց վկայականներ կրող դիտորդներ, թեկնածուներ, տեղական ինքնակառավարման մարմինների աշխատակիցներ, թաղային հեղինակություններ և այլն: Դիտորդների կողմից հանձնաժողովի նախագահին դիմելուց հետո տեղամասում ներկա գտնվելու իրավունք չունեցող անձինք հիմնականում հեռացվել են, որոշ դեպքերում շարունակել են մնալ:

Թե՛ Ազգային ժողովի, թե՛ Երևանի ավագանու ընտրությունների ժամանակ «Անկախ դիտորդ» դաշինքի կողմից դիտարկված

տեղամասերի 8 տոկոսի դեպքում դիտորդների գնահատմամբ քվեասենյակի տարածքը բավարար չի եղել քվեարկության բնականոն ընթացքը և քվեասենյակում գտնվելու իրավունք ունեցող մարդկանց գործունեությունն ապահովելու համար:

Այսպիսով տեղամասերում կողմնակի անձանց ներկայության և վերահսկողության համար արդյունավետ քվեասենյակների ընտրության հետ կապված հանձնարարականները ոչ ամբողջությամբ են իրականացվել:

Խախտումների կանխարգելում. Մեկ հանձնարարական ներկայացվել է խախտումների կանխարգելման և դրանց հայտնաբերման դեպքում անհապաղ քայլերի ձեռնարկման վերաբերյալ:

Այս մասին առավել մանրամասն ներկայացված է Ընտրական վեճերի լուծում և Ընտրական հանձնաժողովներ բաժիններում:

Քվեարկության օրվա և խախտումների հետագա քննության դիտարկման արդյունքում ձևավորվող հիմնական եզրակացությունն այն է, որ խախտումների կանխարգելման ուղղությամբ պատշաճ գործողություններ չեն ձեռնարկվում, իսկ ձեռնարկված քայլերը ավելի շուտ ուղղված են արձանագրված խախտումները կոծկելուն:

Չհանձնարարականը չի իրականացվել:

Վստահված անձինք. ԵԱՀԿ/ԺՅՄԻԳ-ը և ԵԽԽՎ-ն վստահված անձանց վերաբերյալ երկու հանձնարարական են ներկայացրել: Ըստ հանձնարարականների, պետք է կարգավորվեր ընտրական հանձնաժողովի աշխատանքներին վստահված անձանց անպատեհ միջամտելու, ինչպես նաև նրանց վերապատրաստման համար ձեռնարկների մշակման հարցը:

Ընտրական օրենսգրքով սահմանվում է, որ վստահված անձինք իրավունք չունեն որևէ կերպ միջամտելու հանձնաժողովի աշխատանքին: Օրենսգիրքը նաև նախատեսում է, որ վստահված անձը ևս կարող է դուրս հրավիրվել տեղամասային ընտրական

հանձնաժողովի ընդհանուր ձայների 2/3-ով՝ ընտրական գործընթացը խոչընդոտելու համար:

Վստահված անձանց համար ԿԸՀ-ի կողմից մշակվել է ձեռնարկ:

Չնայած անհրաժեշտ օրենսդրական կարգավորումների առկայությանը, 2017թ. գարնանը տեղի ունեցած ԱԺ ընտրությունների ժամանակ «Անկախ դիտորդ» դաշինքի կողմից դիտարկված տեղամասերի 14 տոկոսում արձանագրվել է վստահված անձանց անմիջական մասնակցություն հաշվարկի գործընթացին: Հաջորդիվ տեղի ունեցած Երևանի ավագանու ընտրությունների ժամանակ այդ թիվը նվազել է՝ կազմելով 5 տոկոս: ԱԺ ընտրությունների ժամանակ դիտարկված տեղամասերի 32 տոկոսում նկատվել են այլ անձանց կողմից տեղամասում կարգադրություններ տալու կամ այլ կերպ ՏԸՀ նախագահի գործառույթներն իր վրա վերցնելու դեպքեր, իսկ Երևանի ավագանու ընտրությունների ժամանակ՝ 15 տոկոսում: Այդ անձինք հիմնականում եղել են իշխող Հանրապետական կուսակցության վստահված անձինք կամ այդ կուսակցության շահերը ներկայացնող դիտորդներ: Հարկ է նշել, որ այս ընտրությունների ժամանակ մեծ թիվ են կազմել կեղծ կամ կուսակցական դիտորդները, ովքեր տեղամասերում իրականացնում էին վստահված անձի գործառույթ՝ հիմնականում աշխատելով ի օգուտ Հայաստանի հանրապետական կուսակցության կամ «Ճառուկյան» կուսակցությունների դաշինքի: Այս երևույթի վերաբերյալ մտահոգությունները ներկայացված են 2017թ. ԱԺ ընտրությունների վերաբերյալ «Անկախ դիտորդ» դաշինքի վերջնական գեկույցի Կեղծ՝ «կուսակցական» դիտորդներ բաժնում: Քվեարկության ընթացքում տեղամասերում արձանագրված խախտումները շատ հաճախ եղել են վստահված անձանց կամ վերոնշյալ կեղծ դիտորդների կողմից, օր. վկայականը տեսանելի չկրելը, ընտրողներին օգնելը, ուղղորդելը կամ նրանց քվեարկությունը վերահսկելը: Հարկ է նշել, որ վստահված անձանց կամ կեղծ դիտորդներին տեղամասերից քվեարկությամբ հեռացնելու դեպքեր գրեթե չեն եղել: Հանձնաժողովների նախագահները հիմնականում խախտում կատարած վստահված անձանց հորդորել

են հեռանալ կամ կապ են հաստատել համապատասխան կուսակցության շտաբի հետ կամ ոչինչ չեն ձեռնարկել:

Այսպիսով վստահված անձանց վերաբերյալ հանձնարարականների հետ կապված օրենսդրական կարգավորումներ ընդունվել են, սակայն դրանց կիրառումը խիստ անարդյունավետ է:

Արդյունքների հրապարակում. ԵԽԽՎ-ն, Վենետիկի Յանձնաժողովը և ԵԱԻՅԿ/ԺՅՄԻԳը հինգ հանձնարարական են ներկայացրել արդյունքների հրապարակման վերաբերյալ: Այս հանձնարարականները ներառում էին ընտրության արդյունքները ընտրատեղամասերում փակցնելը, արդյունքներն ըստ ընտրատարածքների հրապարակելը և արձանագրությունները ժամանակին կազմելը: Նոր Ընտրական օրենսգրքի հետ կապված առաջարկվել է նաև նախնական և վերջնական արդյունքները հարմար ձևաչափով հրապարակել ԿԸՅ-ի կայքում՝ ըստ տեղամասերի և շրջանների: Այս հանձնարարականներն իրականացվել են նախկինում և արտացոլվել են նաև 2016թ. Ընտրական օրենսգրքում:

2017թ. Աժ և Երևանի ավագանու ընտրությունների ժամանակ արդյունքների հրապարակման հետ կապված հանձնարարականները պատշաճ կերպով իրականացվել են:

Խախտումների արձանագրումը. Խախտումների արձանագրման վերաբերյալ Վենետիկի հանձնաժողովը և ԵԱԻՅԿ/ԺՅՄԻԳ-ը առաջարկել են, որ քվեարկության ընթացքի խախտումները հանձնաժողովի անդամներից մեկի կամ վստահված անձի պահանջով գրանցամատյանում արձանագրվեն: Օրենքը արտացոլում է հանձնարարականը, նոր օրենսգրքով նման պահանջ ներկայացնելու իրավունք է վերապահված նաև դիտորդներն, սակայն հանձնաժողովները դժկամությամբ են այն իրականացնում, և վերջին ընտրությունները նույնպես այս առումով բացառություն չէին: 2017թ. Աժ և Երևանի ավագանու ընտրությունների ժամանակ խախտումները գրանցելու հետ կապված տվյալները ներկայացված

են սույն զեկույցի Ընտրական հանձնաժողովներ բաժնում, ըստ որոնց՝ զգալի թվով տեղամասերում խախտումները չեն գրանցվել գրանցամատյանում կամ ոչ միշտ են գրանցվել: Յստակ չէ նաև, թե արդյոք հետագա քննության են ենթարկվում գրանցամատյանում արձանագրված խախտումները:

2017թ. Աժ և Երևանի ավագանու ընտրությունների ժամանակ խախտումների արձանագրման հետ կապված հանձնարարականները մասնակիորեն են իրականացվել:

Ընտրական իրավունք. Ընտրական իրավունքի հետ կապված հանձնարարականները վերաբերում են մեծամասնական կարգով թեկնածուների համար զինվորականների քվեարկության թույլատրմանը, արտասահմանում բնակվող քաղաքացիների քվեարկության իրավունքին, բանտարկյալների քվեարկության իրավունքին և երկքաղաքացիություն ունեցող անձանց քվեարկության իրավունքին: Արտասահմանում գտնվող անձանց քվեարկության իրավունքի հետ կապված ավելացել է միայն արտասահմանում ուսման մեջ գտնվող զինծառայողների քվեարկության հնարավորությունը: Սահմանադրության փոփոխություններից ելնելով Ընտրական օրենսգիրքը սահմանում է, որ քվեարկության իրավունք ունեն նաև ոչ ծանր և միջին ծանրության հանցանքների համար դատապարտված անձինք: Ընտրությունների օրը Չայաստանում գտնվող, երկքաղաքացիություն ունեցող անձինք կարող են քվեարկել, սակայն չունեն ընտրվելու իրավունք:

Այսպիսով հանձնարարականները մասնակիորեն արտացոլվել են Ընտրական օրենսգրքում:

Քվեարկության արդյունքների ամփոփում.

Քվեարկության արդյունքների ամփոփման վերաբերյալ մի քանի հանձնարարականներ են ներկայացվել, որոնք վերաբերվել են թափանցիկության, արդյունավետության և հետևողականության ապահովմանը և քվեարկության արդյունքների ամփոփման գործընթացի դյուրինացմանը, մինչդեռ արդյունքների ամփոփումը նոր Ընտրական օրենսգրքով ավելի է բարդացել՝ հաշվի առնելով

քվեարկության կարգի և ըստ այդմ ձայների ամփոփման նոր համակարգի կիրառումը:

Աժ ընտրությունների ժամանակ ձայների հաշվարկի ընթացքում «Անկախ դիտորդ» դաշինքի կողմից դիտարկված տեղամասերի 81 տոկոսում հանձնաժողովի նախագահը տիրապետել է քվեարկության ամփոփման կարգին, 17 տոկոսում՝ մասամբ է տիրապետել, 2 տոկոսում՝ չի տիրապետել: Երևանի ավագանու ընտրությունների ժամանակ դիտարկված տեղամասերի 85 տոկոսում հանձնաժողովի նախագահը տիրապետել է քվեարկության ամփոփման կարգին, իսկ 15 տոկոսում՝ մասամբ է տիրապետել:

Այս ընտրությունների ժամանակ ձայների հաշվարկի ընթացքում քվեաթերթիկների վավերականության գնահատման գործընթացում նկատվել են հանձնաժողովի կողմից միատեսակ մոտեցում չցուցաբերելու առանձին դեպքեր, սակայն դրանք զգալի թիվ չեն կազմել:

Երևանի ավագանու ընտրությունների ժամանակ Դաշինքի կողմից դիտարկվող երկու տեղամասում ձայների ամփոփումը տեղի է ունեցել խիստ լարված մթնոլորտում և արձանագրվել են լուրջ խախտումներ: Մեկ տեղամասում ԵԼՔ դաշինքի 23 քվեաթերթիկ դրվել է Չանրապետական կուսակցության քվեաթերթիկների տրցակի վրա, մյուս տեղամասում քվեաթերթիկները առհասարակ չեն հաշվարկվել և արձանագրությունում սխալ թվեր են գրվել:

Այսպիսով ձայների ամփոփման ընթացքում մեծածավալ խախտումներ չեն արձանագրվել, սակայն առանձին տեղամասերում եղել են կոպիտ խախտումներ: Արդյունավետության տեսանկյունից հանձնաժողովների աշխատանքը բարելավման կարիք ունի: Չանձնարարականները հիմնականում իրականացվել են:

Վարչական ռեսուրսների օգտագործում. Վարչական ռեսուրսների օգտագործման հետ կապված տրվել են մի շարք հանձնարարականներ, որոնք վերաբերում են կուսակցության և պետության տարանջատմանը, քարոզչության և ի պաշտոնե

իրականացվող պարտականությունների բաժանմանը, քարոզչության նպատակով տեղական և կենտրոնական իշխանության ռեսուրսների ազնիվ օգտագործմանը, վերստուգիչ և վերահսկիչ հանձնաժողովի լիազորությունների ընդլայնմանը: Այս ուղղությամբ հանձնարարականների իրականացումը մինչ այժմ անարդյունավետ է եղել:

Ազգային ժողովի և Երևանի ավագանու ընտրությունների նախընտրական քարոզչության ընթացքում վարչական ռեսուրսի չարաշահումը լայնածավալ բնույթ է կրել: Աժ ընտրությունների քարոզչության ընթացքում «Անկախ դիտորդ» դաշինքի երկարաժամկետ դիտորդների կողմից արձանագրվել է վարչական ռեսուրսի չարաշահման 39 դեպք, որոնք եղել են աշխատանքային ժամերին պետական ոլորտի և բյուջետային հիմնարկների աշխատողներին քարոզչական աշխատանքներում ներգրավվելը, ուսանողներին նման աշխատանքներում ներգրավելը, պետական կառույցների տարածքներում շտաբներ տեղակայելը և այլն:

Աժ ընտրությունների նախընտրական քարոզչության ժամանակ մեծ արձագանք ստացավ «Անկախ դիտորդ» դաշինքի անդամ «Իրազեկ քաղաքացիների միավորումը» բացահայտումը, որով 114 դպրոցների և մանկապարտեզների տնօրեններ հաստատել էին, որ Հայաստանի հանրապետական կուսակցության համար ընտրողների ցուցակներ են հավաքագրել, որոնք հիմնականում բաղկացած էին ուսուցիչներից և ծնողներից: Որոշ դեպքերում տնօրենները հայտնել են, որ այդ ցուցակները փոխանցել են տեղական ինքնակառավարման մարմինների աշխատակիցներին, ինչն էլ ավելի է մեծացնում վարչական ռեսուրսի չարաշահման շրջանակը: Այդ բացահայտմանը հաջորդեցին «Իրազեկ քաղաքացիների միավորման» ծրագրերի համակարգող Դանիել Իոաննիսյանի նկատմամբ ճնշումները, մասնավորապես նրա մասին միայն ոստիկանությանը հասանելի անձնական տվյալներ տարածվեցին մամուլով և վերոնշյալ տնօրեններից 30-ը կազմակերպված կերպով դատական հայց ներկայացրեցին նրա դեմ: Ընտրությունների հաջորդող շրջանում հրապարակվեց ՀՀԿ թեկնածու

Արտակ Սարգսյանին պատկանող «ՍԱՍ Գրուպ»-ում տեղի ունեցած նախընտրական ժողովի ձայնագրությունը, որտեղ ժողովն անցկացնող անձը ստուգում էր աշխատակիցների կողմից ներկայացված ցուցակները՝ խոստանալով պարզևատրել մեծ թվեր ապահովող անձանց և աշխատանքից ազատել վատ ցուցանիշ ունեցողներին: Այդ դեպքերի հետ կապված ներկայացված դիմումները և անցկացված քննության մասին ներկայացված է սույն զեկույցի Ընտրական վեճերի լուծում բաժնում: Դրանք որևէ արդյունք չեն տվել:

Ուստի վարչական ռեսուրսի չարաշահումը վերջին ընտրությունների ժամանակ կիրառված ամենալայնածավալ խախտումներից էր և այս ուղղությամբ միջազգային հանձնարարականները լիովին անտեսվել են:

Ընտրակաշառք. Ընտրակաշառքի վերաբերյալ ներկայացված հանձնարարականներից են ընտրակաշառքի քրեականացումը և կանխման մեխանիզմների մշակումը, որոնք անարդյունավետորեն են իրականացվել: Հատկապես խնդրահարույց է ընտրակաշառքի արգելումը միայն նախընտրական քարոզչության Ընտրական օրենսգրքով սահմանված ժամանակահատվածում:

Ազգային ժողովի ընտրությունների քարոզչության շրջանում «Անկախ դիտորդ» դաշինքի երկարաժամկետ դիտորդների կողմից արձանագրվել է ընտրակաշառքի 42 դեպք, որոնք եղել են պարզևներ գումարի, պարենի, նվերների տեսքով, ծառայություններ, շինարարական աշխատանքներ և այլն: Առհասարակ, ընտրությունների ողջ ընթացքում ընտրակաշառքի վերաբերյալ բազմաթիվ հրապարակումներ են եղել:

Երևանի ավագանու ընտրությունների ժամանակ «ԵԼՔ» դաշինքը բացահայտեց ՀՀԿ թեկնածու Տարոն Մարգարյանի շտաբերից մեկում 20.000-ական դրամ ընտրակաշառք բաժանելու դեպքը, ապա դաշինքի ներկայացուցիչների կողմից շտաբի մոտակայքում գտնվող աղբամանից հայտնաբերվեցին փաստաթղթերը, որոնք վկայում էին

ընտրակաշռքի բաժանման համակարգային և կազմակերպված բնույթի մասին:

Այս դեպքերով իրավապահ մարմինների կողմից որևէ արդյունավետ քննություն չի իրականացվել:

Ընտրողների իրազեկում. Առաջարկվել է իրականացնել ընտրողների շարունակական իրազեկում, հատկապես՝ քվեարկության գործընթացը սահմանող օրենսդրական փոփոխությունների վերաբերյալ:

Ըստ 2017թ. ապրիլի 2-ի ԱԺ ընտրությունների ժամանակ ԿԸՅ գործունեության վերաբերյալ հաղորդման՝ ընտրողների իրազեկման նպատակով ԿԸՅ-ն մշակել է քվեարկության կարգի երկու ուղեցույց, որոնք տպագրվել են 300.000 տպաքանակով և հանրային վայրերում տրամադրվել են ընտրողներին: Պատրաստվել են նաև տեղեկատվական պաստառներ և հոլովակներ, ուղեցույց տեսողության խնդիրներ ունեցող անձանց համար, ձեռնարկ և պաստառ ժամկետային զինծառայողների համար:

Չարկ է նշել, որ ընտրողների համար պատրաստված տեղեկատվական բոլոր նյութերը եղել են սոսկ քվեարկության կարգի վերաբերյալ և նոր ընտրակարգի ու քաղաքական փոփոխությունների վերաբերյալ որևէ տեղեկատվություն չեն ներառել:

ԱԺ ընտրությունների քվեարկության օրը «Անկախ դիտորդ» դաշինքի դիտորդների կողմից արձանագրվել են բազմաթիվ դեպքեր, երբ ընտրողները քվեարկության կարգի մասին տեղեկացված չեն եղել, ըստ դիտորդների շատ խախտումներ ընտրողների կողմից թույլ են տրվել չիմացության պատճառով, հատկապես գյուղական համայնքներում:

Ուստի հանձնարարականներն իրականացվել են, սակայն ոչ բավարար չափով:

Ընտրացուցակ. Ընտրացուցակների վերաբերյալ ներկայացվել են բազմաթիվ հանձնարարականներ, որոնցից են ընտրազանգվածների սահմանումը, էլեկտրոնային

ընտրացուցակների օգտագործումը և դրանց ճշգրտման համար համապատասխան մեխանիզմի ստեղծումը, ընտրացուցակների հասանելիության ապահովման ողջամիտ տարբերակի սահմանումը:

Ընտրական Օրենսգրքով նախքան քվեարկության օրը ընտրողների ցուցակներն ըստ ընտրատեղամասերի տեղադրվում են Ոստիկանության կայքում՝ ներբեռնելու հնարավորությամբ: Հրաժարվելով ընտրացուցակները մաքրելու ընդդիմության պահանջից, իշխանությունը համաձայնել էր, որ ընդդիմության կողմից այդ գործառույթն իրականացնելու դեպքում բացակա անձանց տվյալները կներառվեն տեղամասում գտնվող տեխնիկական սարքավորման տվյալներում, ինչը բնականաբար տեղի չունեցավ: Օրենսգրքով սահմանվել է նաև քվեարկության ավարտից հետո ստորագրված ցուցակների հրապարակում, ինչը ընդդիմության և քաղաքացիական հասարակության երկար տարիների պայքարի արդյունքն էր:

2017թ. թե՛ Ազգային ժողովի, թե՛ Երևանի ավագանու ընտրությունների ժամանակ ընտրողների ստորագրած ցուցակները հրապարակվեցին ԿԸՀ-ի կայքում: Ցուցակները բացելու հետ կապված խնդիրներ են եղել, ինչը ԿԸՀ-ն բացատրել է կայքի ծանրաբեռնվածությամբ: Ըստ ԿԸՀ-ի հաղորդման ԱԺ ընտրությունների ընտրողների ստորագրած ցուցակները հրապարակելուց հետո այլ անձի քվեարկության մասին 1 դիմում է ներկայացվել, իսկ մեկ քաղաքացու անուն ներկայացվել է լրատվամիջոցների միջոցով:

Ընտրողների ստորագրված ցուցակների հրապարակումը Էապես նպաստեց այս ընտրությունների ժամանակ այլ անձի փոխարեն քվեարկության հնարավորության նվազմանը, սակայն փոխարենը իշխանությունը գործի դրեց ընտրակեղծիքների այլ գործիքակազմ: Ընտրացուցակների հետ կապված հանձնարարականները մասամբ իրականացվել են:

Քվեարկության գործընթացը. Քվեարկության գործընթացին

առնչվող մի շարք հանձնարարականներ են արվել, այդ թվում՝ առաջարկվել է ապահովել քվեաթերթիկի անվտանգությունը, ընտրողների մատների թանաքապատումը, նշագրել քվեաթերթիկները, մշակել այլ անձի փոխարեն քվեարկության և բազմակի քվեարկության կանխարգելման մեխանիզմներ, դյուրինացնել քվեարկության գործընթացը: Ըստ ԶԻՉխանությունների, Էլեկտրոնային գրանցման համակարգը կանխարգելում է բազմակի քվեարկության հնարավորությունը, ինչն էլ արդարացնում է քվեարկության գործընթացի բարդացումը: Սակայն միանշանակ է, որ թե քվեարկության և արդյունքների ամփոփման գործընթացն անհարկի բարդացել են:

Քվեաթերթիկների հետ կապված նոր Ընտրական օրենսգիրքը սահմանել է դրոշմանիշներ փակցնելու մեխանիզմը, ըստ որի ձայների հաշվարկի ժամանակ սահմանված նմուշի են համարվում միայն այն քվեաթերթիկները, որոնց վրա առկա է դրոշմանիշ: Այս մեխանիզմի հետ կապված սակավաթիվ տեղամասերում նկատվել են խնդիրներ դրոշմանիշները ոչ ամուր փակցնելու հետ, սակայն ընդհանուր առմամբ այն արդյունավետ էր: Մինևույն ժամանակ Ընտրական օրենսգրքով և ԿԸՅ որոշումով խիստ նեղացվել են քվեաթերթիկն անվավեր ճանաչելու հիմքերը, և նույնիսկ անձի ինքնությունը բացահայտող քվեաթերթիկը կարող է անվավեր չճանաչվել: Այդ պատճառով ԱԺ ընտրությունների ժամանակ անվավեր քվեաթերթիկների թիվը մեծ չէր, հակառակ նրան, որ նոր ընտրակարգը և քվեակարգը բավականին խրթին են: Քվեակարգի բարդության առումով հատկանշական են 2017թ. ԱԺ ընտրությունների վերաբերյալ ԵԱԶԿ/ԺՅՄԻԳ-ի վերջնական զեկույցի տվյալները, ըստ որոնց, դիտարկված տեղամասերի 35 տոկոսում ընտրողները քվեարկության գործընթացը հասկանալու հետ կապված դժվարություններ են ունեցել:

Թեև ընտրողների Էլեկտրոնային գրանցման համակարգը և ստորագրած ցուցակների հրապարակումը Էականորեն նվազեցրին այլ անձի փոխարեն և բազմակի քվեարկության դեպքերի հնարավորությունը, ԱԺ և Երևանի ավագանու ընտրությունների

քվեարկության օրերին արձանագրվեցին մի շարք փաստեր, որոնք վկայում էին վերահսկվող քվեարկության և համապատասխան ընտրողների շրջանում ընտրակաշառքի բաժանման բարձր հավանականության մասին: Օր. «Անկախ դիտորդ» դաշինքի դիտարկած տեղամասերում նկատվել են

- քվեարկության մասին բարձրաձայնելու դեպքեր – տեղամասերի 31 տոկոսում՝ ԱԺ ընտրություններին, 37 տոկոսում՝ Երևանի ավագանու ընտրություններին,
- չքվեարկած քաղաքացիներին տեղամաս կանչելու ուղղությամբ գործողություններ ձեռնարկելու դեպքեր - տեղամասերի 14 տոկոսում՝ ԱԺ ընտրություններին, 37 տոկոսում՝ Երևանի ավագանու ընտրություններին,
- մարդկանց մեքենաներով տեղամասային կենտրոն տեղափոխելու դեպքեր - 17 տոկոսում՝ ԱԺ ընտրություններին, 33 տոկոսում՝ Երևանի ավագանու ընտրություններին
- մի շարք տեղամասերում «օգնողների» խմբի առկայություն, և այլն:

Հատկապես ուշագրավ են ձայների ամփոփման ժամանակ արձանագրված ներքոնշյալ տվյալները: Ազգային ժողովի ընտրությունների ժամանակ «Անկախ դիտորդ» դաշինքի դիտարկած տեղամասերի 19 տոկոսում ձայների հաշվարկի ընթացքում նկատվել են քվեախցիկում առկա գրիչի գույնից տարբերվող գույնի գրիչով քվեարկած քվեաթերթիկներ՝ կարմիր, կանաչ, սև: Տեղամասերի ճնշող մեծամասնությունում՝ 32-ում, դրանք եղել են Հանրապետական կուսակցության թեկնածուների օգտին քվեարկած քվեաթերթիկներ: Երևանի ավագանու ընտրությունների ժամանակ նման քվեաթերթիկներ եղել են դիտարկված տեղամասերի 17 տոկոսում, կրկին ճնշող մեծամասնությունը Հանրապետական կուսակցության օգտին:

Այսպիսով այլ անձի փոխարեն կամ բազմակի քվեարկության և քվեաթերթիկների անվտանգության հետ կապած

հանձնարարականները կատարվել են, քվեակարգի դյուրինացման հետ կապված հանձնարարականները՝ ոչ, և մինևույն ժամանակ «կատարելագործվել» են ընտրակեղծիքների այլ մեխանիզմները:

Եզրակացություն

Ընտրությունների միջազգային դիտորդական առաքելությունները (ԸՄԴԱ) Հայաստանյան ընտրությունները դիտարկում են 1996 թվականից ի վեր, և այս առաքելությունների աջակցությամբ ընտրական օրենսդրությունը և ընտրությունների կազմակերպումը Էականորեն փոփոխվել են:

Նոր ընտրական օրենսգրքում ԵԱՀԿ/ԺՅՄԻԳ-ի կողմից ներկայացված որոշ հանձնարարականներ հաշվի են առնվել, սակայն որոշ հանձնարարականներ պատշաճ չեն ընդգրկվել:

Այնուամենայնիվ մտահոգիչ էր ընտրական օրենսգրքի մշակման ընթացքում լայն քննարկումների բացակայությունը, որը կբերեր ոչ միայն օրենսգրքի բարելավմանը այլ նաև ընտրական գործընթացների նկատմամբ հասարակության վստահության բարձրացմանը:

2017թ. Ազգային ժողովի և Երևանի ավագանու ընտրությունները ցույց տվեցին, որ օրենսգրքում արտացոլված հանձնարարականներից շատերը արդյունավետ կերպով չեն կիրառվել, իսկ հաշվի չառնված հանձնարարականները առավել քան անհրաժեշտ էին:

Այդ հանձնարարականները, մասնավորապես, ընտրակաշառքի դեմ գործողությունների ձեռնարկման, քարոզարշավի ֆինանսական թափանցիկության նկատմամբ վերահսկողության ապահովման, ընտրական վեճերի արդյունավետ քննության վերաբերյալ և այլ հանձնարարականներ տեղ են գտել նաև 2017թ. ԱԺ ընտրությունների վերաբերյալ ԵԱՀԿ/ԺՅՄԻԳ-ի վերջնական զեկույցում: Առաջիկա տարիներին՝ մինչև ընտրությունների հաջորդ մեծ փուլը, ՀՀ իշխանությունների կողմից այդ հանձնարարականների պատշաճ իրականացումը խիստ կարևոր նշանակություն ունի Հայաստանի Հանրապետության ընտրական ինստիտուտի կայացման համար:

Օգտագործված գրականության ցանկ

OSCE/ODIHR. (1996). *Armenian Presidential Elections, 24 September 1996, Final report.*

<http://www.osce.org/odihr/elections/armenia/14149?download=true>

OSCE/ODIHR. (1999). *Republic of Armenia Parliamentary Election 30 May 1999 Final Report.*

<http://www.osce.org/odihr/elections/armenia/14203?download=true>

OSCE/ODIHR. (2003). *Republic Of Armenia Presidential Election 19 February and 5 March 2003, Final Report.*

<http://www.osce.org/odihr/elections/armenia/14054?download=true>

VENICE COMMISSION and OSCE/ODIHR. (2016, May 10). *PRELIMINARY JOINT OPINION ON THE DRAFT ELECTORAL CODE AS OF 18 APRIL 2016.*

<http://www.osce.org/odihr/elections/armenia/239591?download=true>

ԵԱՅԿ/ԺՅՄԻԳ. (2013). *Ընտրությունների միջազգային դիտարկում, Հայաստանի հանրապետություն ևախազահի ընտրություններ, հայտարարություն, Լախնական հանգամանքների եվ եզրակացությունների վերաբերյալ, 19 փետրվարի, 2013 թ.*

<http://www.osce.org/hy/odihr/elections/99677?download=true>

ԵԱՅԿ/ԺՅՄԻԳ. (2007). *Հայաստանի Հանրապետություն, Խորհրդարանական ընտրություններ, 12 մայիսի 2007 Վերջնական հաշվետվություն.*

<http://www.osce.org/hy/odihr/elections/armenia/26606?download=true>

ԵԱՅԿ/ԺՅՄԻԳ. (2003). *Հայաստանի Հանրապետություն, Խորհրդարանական ընտրություններ, 25 մայիսի 2003 Վերջնական հաշվետվություն.*

<http://www.osce.org/hy/odihr/elections/armenia/42371?download=true>

ԵԱՅԿ/ԺՅՄԻԳ. (2012). *Հայաստանի Հանրապետություն, Խորհրդարանական ընտրություններ, 6 մայիսի 2012, Վերջնական հաշվետվություն.*

<http://www.osce.org/hy/odihr/elections/91962?download=true>

ԵԱՅԿ/ԺՅՄԻԳ. (2013). *Հայաստանի Հանրապետություն, Լախազահի ընտրություններ 18 փետրվարի 2013, ԵԱՅԿ/ԺՅՄԻԳ Ընտրությունների*

դիտորդական առաքելության զեկուլյց .

<http://www.osce.org/hy/odihr/elections/armenia/32115?download=true>

ԵԱՀԿ/ԺՅՄԻԳ. (n.d.). *Հայաստանի Հանրապետություն, Նախագահի ընտրություններ 19 փետրվարի 2008, ԵԱՀԿ/ԺՅՄԻԳ Ընտրությունների դիտորդական առաքելության զեկուլյց.*

<http://www.osce.org/hy/odihr/elections/armenia/32115?download=true>

Հասարակական կազմակերպություններ. (2016, մայիսի 10). *Կարծիք ՀՀ ընտրական օրենսգրքի դրույթների՝ միջազգային ստանդարտներին համապատասխանության վերաբերյալ.*

<http://transparency.am/hy/news/view/1439>

Հելսինկյան Քաղաքացիական Ասամբլեայի Վանաձորի գրասենյակ ՀԿ. (2015). *ԸՄԴԱ-ների Հանձնարարականների իրականացումը Հայաստանում 2003-2013թթ. Վանաձոր.*

ՀՀ Կառավարություն. (2016). *ՀՀ Ընտրական օրենսգրքի նախածի.*

http://parliament.am/draftreading_docs5/2/K-960_DR2.pdf

ՅԵԼՍԻՆԿՅԱՆ ՔԱՂԱՔԱԳԻԱԿԱՆ ԱՍԱՄԲԼԵԱՅԻ ՎԱՆԱԾՈՐԻ ԳՐԱՍԵՆՅԱԿԻ ՄԱՍԻՆ

ՅԵԼՍԻՆԿՅԱՆ ՔԱՂԱՔԱԳԻԱԿԱՆ ԱՍԱՄԲԼԵԱՅԻ ՎԱՆԱԾՈՐԻ ԳՐԱՍԵՆՅԱԿԸ /այսուհետ՝ ՋԲԱ ՎԱՆԱԾՈՐԻ ԳՐԱՍԵՆՅԱԿ/ ոչ քաղաքական, ոչ կրոնական, շահույթ չհետապնդող հասարակական կազմակերպություն է, որը միավորում է ժողովրդավարության, հանդուրժողության, բազմակարծության և մարդու իրավունքների գերակայության սկզբունքներն արժևորող անհատների:

ՋԲԱ ՎԱՆԱԾՈՐԻ ԳՐԱՍԵՆՅԱԿԻ տեսլականն է՝ մարդու արժանապատվության, ժողովրդավարության և խաղաղության գերակա արժեքներով ձևավորված հասարակություն,

ՋԲԱ ՎԱՆԱԾՈՐԻ ԳՐԱՍԵՆՅԱԿԻ առաքելությունն է՝ ազգային և տարածաշրջանային մակարդակներում քաղաքացիական նախաձեռնությունների աջակցությունն ու խթանումը, խաղաղասիրական ու իրավապաշտպանական գործունեության հզորացումը:

«ՅԵԼՍԻՆԿՅԱՆ ՔԱՂԱՔԱԳԻԱԿԱՆ ԱՍԱՄԲԼԵԱՅԻ ՎԱՆԱԾՈՐԻ ԳՐԱՍԵՆՅԱԿ»

ՋՋ, ք. Վանաձոր 2001, Տիգրան Մեծի 59,

հեռ. (+374 322) 4 22 68; ֆաքս: (+374 322) 4 12 36,
Ինտերնետային կայքէջ: www.hcav.am,
Էլ. Փոստ: hcav@hcav.am

